№ 183 ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11 — 1905 — ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11 № 183

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ազգ օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Բաց նամակ Պ. Մ. Պօնոմարեօվին, Ոճրագործութեան դիմակը. Նամակներ Բագուից, Կաղզուանից, Գանձակից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Հայ քաղաքական յանցաւորները Թուրքիայում. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՕԱՀՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Հայերի և Թուրքերի հաշտութիւնը։

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կովկասեան տխուր իրականութիւնը դրաւել է մայրաքաղաքի և արտասահմանեան մամուլի առանձին ուշադրութիւնը։ Մենք յայտնել էինք, որ Կովկասումն է գտնվում անգլիական «Times» լրագրի թղթակից Գօրդօն Բրօուն։ Նա արդէն ճանապարհորդել է Շուշում, Բագուում, և ներկայումս Թիֆլիսում ամբողջացնում է իր տպաւորութիւնները։ Նա մտադիր է ճանապարհորդութիւն կատարել նաև դէպի Երևանեան նահանգը։ Մի ուրիշ թղթակից Վիլարի, որ ուղարկում է հաղորդագրութիւններ իտալական և ամերիկական լրագիրներին, նոյնպէս ճանապարհորդել է մեր երկրի զանազան տեղերում և ներկայումս նիւթեր է ժողովում պարզելու կովկասեան շարժումների բնաւորութիւնը։ Երէկ, սեպտեմբերի 10-ին, Թիֆլիս հասաւ ֆրանսիական «Journal» լրագրի թղթակից Բերտրան, որ դիտաւորութիւն ունի ուսումնասիրել կովկասեան ներկայ դէպքերը և որոշել նրանց բնաւորութիւնը։ Մի քանի շաբաթից յետոյ սպասվում է «République Française» թերթի աշխատակիցներից մէկը՝ Է. Ֆաղի։

Սրտի ցաւով պէտք է յայտնենք, որ մայրաքաղաքների խմբագրութիւնները այդ կողմից աւելի անհոգ են, քան արտասահմանեան մամուլը. բայց մի և նոյն ժամանակ պէտք է խոստովանենք, որ մայրաքաղաքի մամուլը շատ յոգնածներ է նուիրում մեր երկրի կենցաղոտ հարցերին և աշխատում է պարզել տխուր իրականութեան պատկերը և պատճառները։

—

Մի շաբաթ սրանից առաջ Շուշու գաւառում տեղի է ունեցել դարձեալ մի խոշոր ընդհարում հայերի և Թուրքերի մէջ, որի մասին տեղեկութիւնները միայն այժմ են հասնում Թիֆլիս փոքր ի շատէ մանրամասնօրէն։ Աւդալլեցի Թուրքերի մի խումբ միացնելով իր հետ հարեան գիւղերի Թուրքերին յարձակվում է հայ գիւղացիների վրա, սպանում ութ հոգի և քշում գիւղական տասարը։ Հայերը իմաց են տալիս թէ իրանց հարեան հայ գիւղերին և թէ մերձակայ կազակների հարիւրեակին։ Թուրքերը ժողովում են դարձեալ զինակիցներ շրջակայքից և կազմելով մի քանի հարիւր հոգուց բաղկացած մի բազմութիւն՝ բռնում են ամուր դիրքեր։ Երկու կողմից հրացանաձգութիւնը շարունակվում է մի ամբողջ օր։ Վերջապէս Թուրքերը չեն դիմանում և փախչում են իրանց բռնած դիրքից։ Հայերը հալածում են նրանց։ Զոհերի թիւը յայտնի չէ։ Հայերի մի խումբը հալածելով Թուրքերին քշում են նրանց մինչև Աւդալլի և Գիւլափլի Թուրք գիւղերը, որոնց բնակիչներն էլ խառն են եղել Թուրքական հրոսակին։ Այդ գիւղերը որոշ չափով վնասված են հայերից։

—

Եւլախից դէպի Շուշի տանող ճանապարհը թէև համարվում է խաղաղացրած, բայց ճանապարհորդները զգուշանում են առանց պահակախմբերի երթևեկել։ Մանաւանդ վտանգաւոր են Աղդամի շրջակայքը և ճանապարհը մինչև Ղարաբանդ։

Շուշի քաղաքի մէջ հանգստութիւն է տիրում և քաղաքում անցուդարձը սկսված է թաղերի մէջ, բայց դեռ չը կայ առաջվայ վստահութիւնը, ուստի երեկոյեանները շատ շուտ մարում է փողոցի կեանքը և ցերեկներն էլ մարդիկ հեշտութեամբ մուտք չեն գործում դէպի խուլ տեղերը։

Մթերքների գինը սկսել է իջնել։ Հացը ծախվում է մէկ կամ կէս կոպէկով աւելի թանգ, քան սովորական ժամանակ և դա արդէն մեծ մխիթարութիւն է քաղաքացիների համար։

Այրված և աւերված տները դեռ չեն վերանորոգվում։ Տների խոշոր մասը այնքան սաստիկ աւերվել է, որ պահանջվում են նոր շինութիւններ նրանց տեղը։

—

Ռէշտից մեզ տեղեկացնում են, որ հանգստութիւնը այնտեղ չէ խանգարված և կառավարութիւնը ուշի ուշով հետևում է կասկածելի անձերին։ Բագուցի Թուրքերը շարունակում են իրանց գերգռիչ գործունէութիւնը և յաճախ ժողովներ են կազմում ազդելու տեղացիների վրա։

Ռէշտի ոստիկանապետ Լավալմուլքը իրաւունք է ձեռք բերել ռուսական հիւպատոսից պատժելու այն ռուսահպատակ մահմեդական խռովարարներին, որոնց ներկայ գործունէութիւնը ապացուցված կը լինի։ Ներկայումս բանտարկված են երեք կովկասցի խռովարարներ։

Մի երկու շաբաթ առաջ Էնզէլիում մի սէյիդ, որ գնացած է լինում Բագուից, ամբողջ օրեր պատում է եղել մահմեդականների շարքերը և դրդռում հայերի դէմ։ Ամբոխը յուզված դրութեան մէջ պատրաստ է եղել ներգործական քայլեր անելու և միայն Շահի դալուստը սթափեցրել է տգէտներին և հանել մոլորութիւնից։

—

Աղդամից, սեպտեմբերի 10-ին, 9 ժամ 40 ր. կէսօրից յետոյ մեզ հեռագրում են.

«Այսօր, Աշուռ եպիսկոպոսի և շէյխուլ-իսլամի ներկայութեամբ, իմ կողմից Աղդամ կանչված հայերը, մահմեդականները, հոգևորականութիւնը, բէգերը ամբողջ Աղդամի դաշտահարթի և լեռնային գիւղերի գիւղացիները հանդիսաւոր երդումով հաստատեցին Շուշում կնքված հաշտութիւնը, խոստանալով մոռացութեան տալ տխուր օրերը և առաջվայ պէս ապրել դրացիական բարի յարաբերութիւններով, առիթ չը տալով ընդհարումների»։

Գենեռալ Տակայշվիլի

—

Պետերբուրգի հեռագրական գործակալութիւնը հաղորդում է հետևեալ հեռագիրները.

Բագու, 9 սեպտեմբերի։ Այսօր Փոխարքան ուղեկցութեամբ գեներալ Շիրինկինի, Ֆադեէվի, Գրեաշնովի և շքախմբի, որոնց թւում Ֆինանսների մինիստրի կողմից ուղարկված Իվանովի և Նարդօվի և Փոխարքայի խորհրդի անդամ Զունկօվսկու, այցելեց նաւթահանքերը և լսեց բացատրութիւններ հրդեհի և կողոպտումների ընթացքի մասին, այցելեց Բօմանդանինեան լիճը, նաւթարդիւնաբերողների ժողովի խորհրդի կողոպտված ամբարները և դպրոցը, ուր պահված էին 700 հայեր։ Նաւթահանքերի այցելութիւնը Փոխարքան վերջացրեց խորհրդի այն հիւանդանոցի այցելութեամբ, որի վրա թնդանօթ էին արձակել։ Լսելով բժիշկների ցուցմունքը, և տեղական գարնիզոնի այն պետի բացատրութիւնը, որ կարգադրել էր հարուածել թնդանօթով հիւանդանոցը, Փոխարքան հրամայեց քննութիւն կատարել։ Նաւթահանքերում կը սկսվի աշխատութիւնը, երբ այրված իրերը կը մաքրվեն և ճանապարհները կուղղվեն։ Պարսից հիւպատոսը հաղորդեց, որ 15,000 պարսիկ մշակ է Պարսկաստան ուղարկված։ Դեռ սպասվում է այդքան հոգու արտաքսումը։ Նկատվում է հայ և ռուս բանւորների սաստիկ գաղթումն։

—

Գանձակ, 7 սեպտեմբերի։ Կողոպտումները Գանձակի նահանգում խիստ սաստկանում են մանաւանդ տանջվում է հայ և ռուս ազգաբնակութիւնը։ Սեպտեմբերի 3-ի գիշերը, Թուրքերի մի հրոսախումբ կողոպտեց ռուսաց Լուցօվկա գիւղը։ Ամբողջ գոյքը թալանված է և ոչնչացրված։ Բնակիչները, լքելով բնակարանները, տեղափոխվել են մօտակայ Սլավեանսկ գիւղը։

—

Մայրաքաղաքի բոլոր լրագիրներում հրատարակված է Պետերբուրգի գործակալութեան հետևեալ հեռագիրը.

Կիսլովոդսկ, սեպտեմբերի 2-ին.

Պաշտօնապէս հրատարակված է պրինց Նապոլէօնի զեկուցումը Գօրիսից, սեպտեմբերի 1-ից հետևեալ բովանդակութեամբ.

«Դուրս գալով Երևանից օգոստոսի 29-ին, միայն 31-ի առաւօտը ես հասայ Գօրիս, անդադար ձիավարելով, այն պատճառով, որ սաստիկ լեռնոտ է երկիրը և դժուարամատչելի նոյն իսկ ձիաների համար։ Ծանօթանալով գործի դրութեան հետ, զեկուցանում եմ, որ մինչև Շուշու դէպքերը, որոնք սուր կերպարանք ստացան Երևանի և Նախիջևանի դէպքերի ազդեցութեան տակ, յարաբերութիւնները մահմեդականների և հայերի մէջ զսպվում էին գաւառի սահմանների վրա գաւառապետի ձեռքով, և անհատական դէպքերով էին արտայայտվում։ Եղան բռնութիւնների և սպանութիւնների դէպքեր։ Շուշու դէպքերը առաջացրին խիստ ագիտացիա հայերի դէմ՝ Զանգեզուրի գաւառի սէիդների, Թուրք ազգաբնակութեան մի քանի ազդեցիկ անձերի կողմից Թափառականների մէջ, որոնք այստեղ հաւաքված են ուրիշ գաւառներից՝ 8000-ից աւելի քանակութեամբ։ Այս բանի հետևանքն այն եղաւ, որ Թափառականները վճռեցին իջնել իրանց քոչատեղերից և ճանապարհին, վրէժ հանելու համար, թալանել հայոց գիւղերը։ Աշակցութիւն պիտի ցոյց տային 1200 ձիաւոր քրդեր Զանգեզուրի գաւառից, որոնք վերադառնում էին Շուշու գաւառից, նոյնպէս և պարսկական ձիաւոր խումբը, բաղկացած 500 հոգուց, որ այդ միջոցին անցել էր սահմանը։ Թափառականների վերադարձը դէպի տուն տեղի ունեցաւ չորս զանազան ուղղութիւններով։ Գաւառապետի ժամանակին ձեռք առած միջոցներով աջողվեց սահմանի միւս կողմը վերադարձնել պարսիկներին, որոնք կարողացել էին հասնել մինչև Խօջահանի բազարը, սահմանից 25 վերստ դէպի մեր կողմը։ Գաւառապետին աջողվեց հասողել ցրվել քուրդ ձիաւորներին և անցկացնել Գօրիսի միջով երկու խումբ Թափառականներ, այսպիսով քաղաքի և մի շարք գիւղերի վրա յարձակվելու առաջն առնելով։ Այս ժամանակ Շուշու և Զաւադի գաւառների Թափառականների մի խումբ, որ տուն էր վերադառնում Մինքենդի միջով, օգոստոսի 20-ի գիշերը լոյս 21-ը յարձակվեց գիւղի վրա, թալանեց և այրեց, սպանելով 17 հայ, յետոյ ուղևորվեց դէպի Ալիկուլքէնդ, ուր հասաւ օգոստոսի 24-ին և տեսաւ որ այդ գիւղը արդէն պաշարել են Զանգեզուրի գաւառի երեք հասարակութիւնների բնակիչները։ Գիւղը թալանվեց և հրդեհվեցին 24 տներ։ Օգոստոսի 25-ին գիւղը ազատեց Գօրիսից վրա հասած գաւառապետը, որին աջողվեց ցրվել Թափառականներին և Թուրքերին. բայց նոյն այդ օրը երկրորդ փորձ արվեց գիւղը պաշարելու, չը նայած որ գիւղի մէջ գտնվում էին գաւառապետը և 70 կազակներ։ Այդ փորձը չաջողվեց։ Հրացանաձգութեան ժամանակ սպանվեցին մի կազակ, 7 հայ, շատ մահմեդականներ։

Դեռ օգոստոսի 22-ին այն գիւղերի պաշտպանութեան համար, որոնք գտնվում են Թափառականների ուրիշ խմբերի վերադարձի ճանապարհին, գաւառապետը ուղարկել էր պահապանների օֆիցերին 63 կազակների և ստրաժնիկների հետ Մինքենդ գիւղ, որ արդէն մի անգամ ենթարկվել էր յարձակման։ Այստեղ օֆիցերը տեղեկութիւն ստացաւ որ Թափառականները յարձակվել են Խոզնավար գիւղի վրա։ Պրիստաւ Մելիք-Ասլանովը օֆիցերին խաբեց, ասելով թէ Մինքենդին չէ սպառնում նոր վտանգ, ուստի օֆիցերը, թողնելով պրիստաւին այդ գիւղում մի քանի մարդկանց հետ, ճացածները վերցրած, օգոստոսի 23-ին գնաց ազատելու խոզնավարցիներին։ Նրա հեռանալուն պէս Մինքենդի մահմեդականները յարձակվեցին հայերի վրա, կոտորեցին մօտ 140 մարդ և վիրաւորեցին 40 հոգի։ Այս բոլորը տեղի ունեցաւ պրիստաւի աչքերի առաջ, որ ոչ միայն աջակցութիւն չը ցոյց տուեց, այլ նոյն իսկ չը յայտնեց օֆիցերին յարձակման մասին, որի պատճառով իսկոյն պաշտօնից հեռացրեց նրան գաւառապետը մինչև դատաստանական պատասխանատուութեան ենթարկվելը։

Անկարգութիւնները շարունակվեցին օգոստոսի 19-ից մինչև 20-ը։ Այժմեան ժամանակ Թափառականներից ազատված գաւառում հանգստութիւն է տիրում, բայց յարաբերութիւնները ազգութիւնների մէջ այնքան լարված են, որ ամենափոքրիկ մի առիթը կարող է նոր լուրջ անկարգութիւններ առաջացնել։ Սրա առաջն առնելու համար այստեղ գտնված չորս հարիւրեակ կազակների վրա աւելացրված են երկուսն էլ։ Շնորհիւ գաւառապետի անքոյթ եռանդի, այն վճռական միջոցներով, որ նա ձեռք առաւ անկարգութիւնների սկզբում, իմ հրամանով, աջողվեց թալանած կայքերից շատ բան վերադարձնել փաստածներին և պարզել միւս մասի գտնված տեղը։

Տեղն ու տեղը միջոցներ ձեռք կառնեմ մեղաւորներին որոնելու և պատժելու։ Գնում եմ տեսնելու փաստված գիւղերը և այցելելու գաւառի այն մասերը, որոնք առանձնապէս գրգռված էին վերջին անկարգութիւնների ժամանակ։ Վիրաւորներին բժշկական օգնութիւն հասցնելու համար անհրաժեշտ է այժմ իսկ բաց թողնել 1000 բուբլի անհրաժեշտ բաները ձեռք բերելու համար, որովհետև բժշկի ձեռքում եղած դեղերն ու վիրակապական միջոցները վերջացել են և այժմեան ժամանակ կարօտեալները օգտվում են այն միջոցներից, որ փոխ են առնված բանտի հիւանդանոցից։

Մանրամասնութիւնները կը զեկուցանեմ ճանապարհորդութիւնից վերադառնալուց յետոյ»։

## ՄԱՄՈՒԼ

—

«Русь» լրագիրը հետևեալ գեղեցիկ յօդուածն է նուիրել հայոց հարցին Ռուսաստանում.

Մենք մինչև այժմ չենք եղել քաղաքացիական ազգ, ուստի և, իբրև ազգ, չենք ունեցել ոչ արտաքին, ոչ ներքին քաղաքականութիւն։ Մեզանում չէին կարող լինել մշակված քաղաքական հայեացքներ, որոշված ծրագիրներ և համոզմունքներ։

Զրկված լինելով պետական կեանքի մէջ ակտիվ դերից, դատապարտված լինելով կրաւորական դերի, մենք փոխանակ հաւատքների, որոնք միշտ տանում են դէպի գործողութիւն, մենք կազմում էինք մեր մէջ աւելի նախապաշարմունքներ, որոնք սովորաբար կանգնեցնում են ամեն մի կենդանի գործունէութիւն։

Այսպիսի քաղաքական նախապաշարմունքներ, որոնք կանգնեցնում էին մեր բնական պետական հասակը, դնելով ռուսական մի տեսակ «տաբու» պետական մի շարք անյեռաձգելի հարցերի վրա, արդէն քիչ չեն կուտակվել մեր մէջ։ Գլխաւորներից մէկը վերաբերվում էր լեհերին և Լեհաստանին։ Այդ նախապաշարմունքը քանդելու համար նախապատրաստական աշխատանքը միահամուռ և անկեղծ կերպով ձեռք առաւ մեր մամուլի մի նշանաւոր մասը, և աջողութիւնը գերազանցեց նոյն իսկ ամենթունդ սպասելիքներն անգամ։ Կատարեալ պարզութեամբ յայտնի դարձաւ, որ այնտեղ, ուր մենք ենթադրում էինք, յաւիտենական անհաշտ ատելութիւն, իսկապէս գոյութիւն ունի լուրջ ցանկութիւն և նոյն իսկ վճռականութիւն մեզ հետ խելացի միութիւն կազմելու։ Լեհական ինքնավարութեան ամենաարմատական ծրագիրները վկայում են, որ լեհերը իրանց ազգային վիճակը կարգադրելու հնարաւորութիւնը գտնում են մեզ հետ բարի համաձայնութիւն կայացնելու և մեր պետական իշխանութեան տակ գտնվելու մէջ։ Պէտք է միայն գտնել ռուս-լեհական կենակցութեան մի աւելի աջող ձև, և մեր քաղաքականութեան աջողութիւնը ոչ միայն արևմտեան սահմանագլխի վրա, այլ գուցէ և առհասարակ Եւրոպայում ապահովված կը լինի։

Այս տեսակ մի նախապաշարմունք էլ, նոյնքան սար և նոյնքան էլ մակերևոյթային, որ բոլորովին իզուր պատճառել է անվերջ շատ վնաս մեր պետութեան, գոյութիւն ունի և հայ ազգի վերաբերմամբ։ Ի դէմս հայերի, ինչպէս և ի դէմս լեհերի, ռուս հասարակութիւնը սովորել է տեսնել ոչ ցանկալի, վնասակար, անհամակրելի մի տարր։ Այդ հայեացքը զարգացել է պատմական ճանապարհով. մենք գնացինք Կովկաս իբրև նուաճողներ և մեզ համար ընկերներ ու «կունակներ» որոնեցինք տեղական ռազմիկ ազնուականութեան մէջ։ Մեզ համար թանգ ու սիրելի էին վրացիները (ազնուականութիւնը, և ոչ թէ ժողովուրդը, որին մենք արհամարհում էինք), մեզ հասկանալի էին Թուրքերը իրանց կեանքի ընդհանուր կազմով։ Բայց հայերին, «սովդաքարներին», մենք տանել չէինք կարողանում։ Եւ այս բանը տեղի ունեցաւ ոչ թէ այն պատճառով, որ հայերը թշնամաբար էին վերաբերվում մեզ, բոլորովին ընդհակառակն. նրանք սկզբից և եթ մեր անկեղծ դաշնակիցներն էին։ Բայց մեր եկեւոր տարրերը Կովկասում—զինուորականները և պաշտօնեաները—չէին կարողանում մօտենալ այդ գործնական ազգին։ Այդպիսի պատահական բացասական վերաբերմունքը դէպի հայերը ապագայում ամրապնդվեց մեր գրականութեան մէջ եղած թեթևամիտ արարքներով։ Մեր և հայերի մէջ փորված է մի խոր փոս։ Եւ այնպիսի մի փոս, որ նրա մէջ թափվում են ոչ միայն հայկական, այլ և մեր սեփական կենսական շահերը...

Անհրաժեշտ է լուրջ և անկեղծօրէն քննել և հասկանալ, թէ ինչ է կատարվում Կովկասում։ Ժամանակ է վերջապէս բաց անել աչքերը և տեսնել գործի իսկական դրութիւնը, թափթփելով բոլոր նախապաշարմունքները և նախապատութիւն տալը սրբան կամ նրան, մեր քաղաքական տհասութեան այդ պտուղները։

Ի՞նչ նպատակ ունենք մենք Կովկասում։ Կուլտուրական թէ ոստիկանական։ Ուզում ենք մենք Կովկասը հաղորդակից անել քաղաքակրթված երկիրներին, մշակել նրա հարստութիւնները, ստեղծել նրանից մի ամուր յենակէտ քաղաքականութեան համար Պարսկաստանում և Ասիական Թուրքիայում։ Թէ մենք կը բաւականանք, ստանալով տեղեկութիւններ, թէ Կովկասում, ինչպէս Շիպկայի վրա, «ամեն ինչ հանգիստ է»... առ այժմ։

Այս վերջին դէպքում մեզ, ի հարկէ, հարկաւոր է շարունակել պահպանել ռանդական «divide et impera»-ն և խրախուսել թուրքերին։ Թող թուրքերը որքան կարելի է շատ մորթոտեն անհանգիստ, յաւիտեան շարժուն և դէպի մի ինչ-որ տեղ ձգտող հայերին, իսկ յետոյ մենք նորից կը սկսենք խլել Կովկասը մահմեդականներից, սարքելով «կանոնաւոր ճակատամարտերի արիւնոտ սպանդանոց։ Այն ժամանակ էլ կը գայ ցանկացած «խաղաղացումը»։

Ահա բնական ընթացքը այն շրջանների մտքի, որոնց իդէալների մէջ մտնում են հասարակական «յեղափոխութեան» զսպումը, թոյլ աալով որ սև հարիւրեակները ապստամբ ինտելիգենցիայի հախից գան։ Որ թուրքերը կոչման բարձրութեան վրա կը լինեն իբրև այդպիսի խաղաղացնողներ, ոչ մի ժամանակ այս մասին կասկած չէ եղել։ Այստեղից է և հաճակրանքը, աշկարայ թէ գաղտնի, դէպի թուրքերը—«դուշ» խաղաղացնողների կողմից։

Բայց եթէ ապագայի մեր նպատակը Կովկասում իսկապէս և ոչ կեղծաւորաբար, ինչպէս մինչև այժմ, կուլտուրական է,—մենք պիտի թողնենք մեր հին հայեացքները, պիտի խնամքով ենթարկենք բոլոր տեղական հանգամանքները վերաքննահատման, պիտի կոտրենք մեր նախապաշարմունքները։ Եւ այսպիսի վերաքննահատման միջոցին մենք կը գտնենք որ մեր ատած հայերը Կովկասում և նրա մերձաւոր սահմանների եռևում ծառայում են իբրև պինդ և տոկուն պատուար քրիստոնէական և եւրոպական գաղափարի՝ մահմեդական աշխարհի սահմանների վրա, մի աշխարհի, որ մեր աչքի առջև սերտ համախմբվեց։

Մենք պիտի հասկանանք և գնահատենք մեր այդ բնական դաշնակիցներին։ Եւ անհրաժեշտ է այս անել այժմ և եթ, երբ մեզ հարկաւոր է մի բան հասկանալ կովկասեան շփոթից, ճանաչել նրա գործիչներին և նրան դադարեցնելու միջոցները։

Ինչ վերաբերվում է հայերին, նրանք թէև հասկանալի պատճառներով այժմեան ժամանակ անկասկած մեզ դէմ են գնում, բայց դժուար չի լինի նրանց մէջ կատարեալ յեղաշրջում առաջացնել այն հայեացքների վերաբերմամբ, որ նրանք ունեն դէպի Ռուսաստանը և ռուսները։ Այսպիսի յեղաշրջման կամ աւելի ճիշտ ասած՝ հայերին դէպի նախկին իրանց հայեացքը դարձնելու բոլոր գրաւականները կան այժմ։ Ճիշտ և ճիշտ ինչպէս լեհացիների մէջ։

Առհասարակ հայկական և լեհական հարցերի մէջ նմանութիւններ շատ կան։ Երկու ազգերը գտնվում են մեր պետութեան ամենակարևոր ծայրերում, կենտրոնից շատ են հեռու գնացած։ Երկու ազգերն էլ քաղաքականապէս բաժանված են երեք մասի հարևան պետութիւնների մէջ, և Ռուսաստանում գտնվում է հայերի ձգտման պատմական կենտրոնը—Էջմիածինը, ինչպէս և լեհական կենտրոնը—Վարշավան։ Երկու ազգութիւններն էլ վերաբերվում են իրանց դառնադէտ դրութեան կատարելապէս գիտակցաբար և ձգտում են միանալու։ Ինչպէս լեհացիները երազում են վերականգնելու միացած Լեհաստանը ազգագրական սահմանների մէջ, այնպէս էլ հայերը տենչում են հայ ցեղը միացնելու մասին։ Թէ լեհերը և թէ հայերը արդարացի են այդ ձգտման մէջ, որովհետև այդպիսի մի ձգտում բնական և յատուկ է ամեն մի ազգի, որ նստած է իր ազգային հողի վրա, ունի կուլտուրա և պատմական անցեալ։

Հայերի և լեհացիների դրութիւնը այն առանձին պետութիւնների մէջ, ուր նրանք ապրում են ըստ բաժանման, նոյնպէս հասանման է նշանաւոր չափով։ Թիւրքաց Հայաստանը մօտաւորապէս պրուսական Լեհաստանի դրութեան մէջ է և քրդերը այդտեղ իսկապէս նոյն դերն են կատարում, ինչպէս և արտաքուստ կուլտուրական, բայց ոչ պակաս մոլեգին պրուսացիները։

Թիւրք և պրուսական կառավարութիւնները մի սրտաշարժ միացում են ցոյց տալիս իրանց ատելի տարրերի «ջնջման քաղաքականութեան» մէջ։ Պարսկական Հայաստանը մի յայտնի չափով յիշեցնում է Գալիցիան, աւստրիական Լեհաստանը այստեղ, ինչպէս և այնտեղ, հայ և լեհ ազգաբնակութեան վերի խաւերը բարօրութեան մէջ են, փոխառութեան հիմքերի վրա սարքելով շատ ձեռնտու կերպով իրանց կենակցութիւնը իշխանութիւնների հետ, բայց չունևոր դասակարգերը ճնշված են ազգաւորութեան և իրաւազրկութեան մէջ։ Աճում և զարգանում է ինչպէս հայ, նոյնպէս և լեհ ժողովուրդը գլխաւորապէս Ռուսաստանում, և ոչ թէ արտասահմանում։ Ոչ միայն լեհ, այլ և հայ ժողովրդի ապագան—Ռուսաստանում է։ Միայն ռուսական սահմանների լայնացումը կարող է իրագործել հայկական և լեհական ձգտումները միացման մասին։ Այս ամենքին հասկանալի է։ Բայց Ռուսաստանը սրա համար պիտի այլ բան դառնայ, քան էր մինչև այժմ։ Իսկ ինչ վերաբերվում է շովինիստական ձգտումներին վերանորոգելու Լեհաստանը «ծովից մինչև ծով» կամ Մեծ Հայաստանը՝ դրանք բէօլական նպատակներ չեն, այլ միայն թէօրետիկական և տակտիկական տրամադրութիւններ, ինչպէս միջոց պահպանելու ժողովուրդը, որ կորցնում է հաւատը անվերջ մրցութեան մէջ. դրանք դրօշակներ են, որոնք բարձրացվում են քանի որ շուրջը միայն թշնամութիւն է և բարձրացվում այնքան աւելի բարձր, որքան անհաշտ է թշնամութիւնը։ Անապատներում ժողովրդին հարկաւոր է հրեղէն սիւն իբրև ճանապարհի առաջնորդ, որպէս զի չը կորցնէ իր անդամներին...

Մեծ Հայաստանի գաղափարը մի լուրջ մեղք համարել հայերի վերաբերմամբ նոյնքան անհեթեթ է, որքան վրդովվելը այն փաստով, որ գոյութիւն ունեն նրանց կոմիտէները։ Փորձենք մեր ամուր ձեռքն առնել հայ ժողովրդի վերածնութեան գործը, և հայոց յեղափոխական կոմիտէների գործունէութիւնը կը դադարէ մեզ համար վնասակար լինելուց։

Հայերը—սա ամեն մի կասկածից դուրս է—կատարելապէս կը բաւականան իրանց ամենագլխաւոր կենսական շահերի կողմից, եթէ մենք վերջապէս կը սկսենք լուրջ կերպով և սիստեմաբար հաստատել Կովկասում իսկական քաղաքացիական և իրաւական կարգ։ Այս ասպարէզում մենք ի դէմս հայերի կունենանք բնական դաշնակիցներ, որոնց ուղղակի հաշիւը կը լինի գնալ մեզ հետ միասին։ Միւս կողմից դէպի Կովկասի բոլոր ազգութիւնները արդարացի, իսկապէս մարդասէր կառավարութիւնը անշուշտ ներգործութիւն կունենայ և մահմեդական ազգաբնակութեան վրա, քրոնիկական գրգռումը կերակուր է ստանում գլխաւորապէս նրանից, որ ամենքը զգում են ընդհանուր դրութեան անկայունութիւնը և իրերի այժմեան դրութեան թուլութիւնը Կովկասում։

Այս տեսակ խելօք, խորամիտ խորհրդածութիւններ շատ քիչ է պատահում կարդալ ռուսաց մամուլի մէջ։ Յօդուածի յենակէտը այնքան խելացի է, այնքան զարմանալի ճշմարիտ, որ եթէ ռուս հասարակութիւնը ըմբռնէ նրա ամբողջ անհրաժեշտութիւնը, այն ժամանակ հայ ազգը կը խօսէ նրա հետ կատարեալ անկեղծութեամբ և սրտաբացութեամբ, բաց կանէ իր վերքերը, իր անլուր տառապանքները։ Եւ այդ ժամանակ—մենք խորապէս համոզված ենք—ռուս ժողովուրդը կը համոզվի վերջնականապէս, թէ որքան ստութիւն և կեղծիք կայ այն նախապաշարմունքի մէջ, որով նրան փաթաթել է պաշտօնական օտարակերութիւնը, կը տեսնէ և այն, թէ որքան անհիմն ու անհեթեթ են խօսք ու զրոյցները հէնց նոյն իսկ Մեն Հայաստանի վերականգնման մասին...

## ԲԱՑ ՆԱՄԱԿ Գ. Մ. ԳՕՆՕՄԱՐԵՎԻՆ

—

*Մեծարգոյ պարոն*

*Կոստանդին Մակսիմովիչ։*

Պետերբուրգի մի քանի լրագիրների այսօրվայ համարներում տպված են հեռագիրներ Բագուից. հեռագիրներից մէկի տակ կայ անանուն ստորագրութիւն «Բագուի մուսուլմաններ», իսկ մի ուրիշի տակ «Բագուի մուսուլմանների ներկայացուցիչ»։ Ես այդ հեռագիրների վրա ոչ մի ուշադրութիւն չէի դարձնի, չը նայելով նրանց ստայօդութեան, որովհետև անօնիմները ոչ մի պատասխանի տրժանի թիւնների կողմակից չեն, աշխատում են իրանց կրօնակիցներին սխալ քայլերից հեռու պահել։

Ոչ միայն բէկերը, այլ և հասարակ թուրք գիւղացին առանց հայի օգնութեան անկարող է հողագործութեամբ պարապել։ Շատ ժամանակ չէ անցել, երբ տեղական խաշնարած թուրքերը սկսել են և հող վարել, ուստի դեռ անհմուտ երկրագործներ են, զուրկ տոկուն աշխատանքի ընդունակութիւնից, որովհետև հողագործութիւնը պահանջում է մարդուց լարել իր ամբողջ ոյժը կարճ ժամանակամիջոցում՝ գործը վերջացնելու համար։

Հետևեալ անեկդոտը ըէլիեֆ կերպով պատկերացնում է երկու ազգութիւնների իրար միջև ունեցած յարաբերութիւնը։—Մի թուրք բէկ հանդով անցնելիս տեսնում է, թէ ինչպէս իր հարկատու թուրք գիւղացին վիզը ծռած կանգնել է իր կոտրած գութանի մօտ, ակօսը կիսատ թողած։ Այդ տեսարանը խիստ զայրացնում է բէկին, որը սկսում է անխնայ գանակոծել գիւղացուն և ասել. «շուն, շան որդի, բա դու մի հայ «քիրվա» չունես, որ կարգին գութան շինէր քեզ համար. իսկ եթէ չունես, ինչու չես մէկը ճարում, որ քեզ վարելում, հնձելում օգնէր»...

Մի շաբաթ սրանից առաջ անձրևը փչացնում է թուրքերի Թարթառ գետից հանած առուների ամբարտակը (դահնա), որը գտնվում է հայ գիւղերի մօտ։ Տեղական դիրք ունեցող մի բէկ իրանց հարևան սարովցիներին գրում է հետևեալ նամակը, օգոստոսի 23-ից, որի պատճէնն ամբողջութեամբ բերում եմ այստեղ՝ ցոյց տալու համար, թէ որքան հայ և թուրք միմեանցից առնչութիւն ունեն։

«Սիրելիք սարաւցիներ,

«Փառք Աստծու, Շուշում խաղաղութեամբ վերջացաւ հայերի և թուրքերի միջև ծագած յիմար կռիւը։ Ես արդէն կարգադրել եմ, որ Զիվանշիրի մահմեդականները ձեզ չը նեղացնեն, մանաւանդ հասանչայացիներին և սարովցիներին։ Դրա մասին ձեզ հաղորդում եմ և խնդրում, որ անհանգիստ չը լինէք և չը թողնէք մեր չալթուկը ու բամբակը առանց ջրի։ Գնացէք Զայլու և նորոգեցէք ջրի ամբարտակը և ջուրը առուները կապեցէք։ Այդ բոլորն ինքներդ կատարեցէք, որովհետև թուրքերը չեն համարձակվում այնտեղ գնալ և այդ առ այժմ անյարմար է։ Մի խօսքով, շատ էլ չանհանգստանաք, ձեր գործերով զբաղվեցէք։ Բոլոր ջինլուցիներին պատուիրել եմ, որ ձեզ պաշտպանեն անզգամ մուսուլմանների դէմ, որպիսին են «գիւլլար-ուշաղի»ներն (աւազակներ են)։ Վերջի վերջոյ սրանց կառավարութիւնը կը պատժէ, որը լաւ տեղեակ է նրանց կատարած սխրագործութիւնների մասին»։

Եթէ տեղական յայտնի կալուածատէրերը, Մաշադի Իսմայիլ-բէկ Թաղիբէկովը, Ադիգեոզալբէկ Ադիգեոզալովը, Բահաթուր-բէկ Կազբէկովը, Աղատ-աղա Զիվանշիրը, Զհանգիրխան Նուրիբէկովը, ցանկացան խառնակութիւնների առաջն առնել, ամենքն էլ խոստովանում են, որ աջողութիւն կունենան, որովհետև թուրք ամբոխը ճանաչում է իր մեծերի հեղինակութիւնը։

Դաշտաբնակ թուրքերի գլխաւոր զբաղմունքն անասնապահութիւնն է։ Մեր երկրի տափարակների բազմաթիւ անյարմարութիւններից ստիպված, թուրքերը մայիսի սկզբից սկսում են չուել սարերը՝ արօտատեղիներ ճանապարհելու։ Ահա, օրինակ այդ տեսակ անհատներից մէկը ձի հեծած դիմում է արտեղ ու այստեղ, փրփուրը բերանին պատմում է հայերի մասին անլուր զրպարտութիւններ, աւելացնելով, թէ հարևան այս ինչ հայի մօտ հաւաքվել են 500 ձիաւոր՝ թուրքերի վրա յարձակվելու մտադրութեամբ. արդ՝ ի՞նչու իրանք էլ չը հաւաքվեն և «խմբեր» կազմեն հայերի նման։

Միամիտ թուրք գիւղացիները հաւատ են ընծայում ագիտատորի խօսքերին, ամեն կողմից հաւաքվում են նախօրօք որոշած տեղը՝ իրանց ունեցած-չունեցածն անտէր թողնելով։ Ագիտատորի ցանկացածն էլ հէնց այդ է. խոկոյն իր արբանեակներին նա ուղարկում է և քշել տալիս անպաշտպան ոչխարն ու տաւարը։ Վերջին ժամանակները այդպիսի դէպքեր յաճախ են պատահում։ Օրինակ, ամսիս 26-ին քեօլանիները գալիս են Կարակոյուն գիւղը, որը կված է Թափ մալականների գիւղին, որ կարակոյունցիներից էլ ձիաւորներ հաւաքեն։ Կէս գիշերին, երբ ամենքը քնած են լինում, քեօլանիները վեր են կենում և իրանց հիւրընկալ հարուստ խաշնարած Հասան-Ալուց գողանում են 10 հատ տաւար։ Երբ կողոպտված կարակոյունցիները հետևեալ օրը գալիս են քեօլանիների գիւղը և աղերսում իրանց տաւարը յետ դարձնելու, քեօլանիները խլում են նրանց հրացանները և դատարկաձեռն բաց թողնում։

Կան թուրք բէկեր, որոնց ապրուստը գալիս է հայ գիւղացու ձեռքով. նրանց հողը հայն է վարում, արտը հնձում, խոտը հարում. առանց հայի նրանց տնտեսութիւնը կը քայքայվէր։ Ահա այդպիսի թուրքերը խառնակութեամբ և աւազակութեամբ։ Ահա, օրինակ այդ տեսակ անհատներից մէկը ձի հեծած դիմում է արտեղ ու այստեղ, փրփուրը բերանին պատմում է հայերի մասին անլուր զրպարտութիւններ, աւելացնելով, թէ հարևան այս ինչ հայի մօտ հաւաքվել են 500 ձիաւոր՝ թուրքերի վրա յարձակվելու մտադրութեամբ. արդ՝ ի՞նչու իրանք էլ չը հաւաքվեն և «խմբեր» կազմեն հայերի նման։

Միամիտ թուրք գիւղացիները հաւատ են ընծայում ագիտատորի խօսքերին, ամեն կողմից հաւաքվում են նախօրօք որոշած տեղը՝ իրանց ունեցած-չունեցածն անտէր թողնելով։ Ագիտատորի ցանկացածն էլ հէնց այդ է. խոկոյն իր արբանեակներին նա ուղարկում է և քշել տալիս անպաշտպան ոչխարն ու տաւարը։ Վերջին ժամանակները այդպիսի դէպքեր յաճախ են պատահում։ Օրինակ, ամսիս 26-ին քեօլանիները գալիս են Կարակոյուն գիւղը, որը կված է Թափ մալականների գիւղին, որ կարակոյունցիներից էլ ձիաւորներ հաւաքեն։ Կէս գիշերին, երբ ամենքը քնած են լինում, քեօլանիները վեր են կենում և իրանց հիւրընկալ հարուստ խաշնարած Հասան-Ալուց գողանում են 10 հատ տաւար։ Երբ կողոպտված կարակոյունցիները հետևեալ օրը գալիս են քեօլանիների գիւղը և աղերսում իրանց տաւարը յետ դարձնելու, քեօլանիները խլում են նրանց հրացանները և դատարկաձեռն բաց թողնում։

Կան թուրք բէկեր, որոնց ապրուստը գալիս է հայ գիւղացու ձեռքով. նրանց հողը հայն է վարում, արտը հնձում, խոտը հարում. առանց հայի նրանց տնտեսութիւնը կը քայքայվէր։ Ահա այդպիսի թուրքերը խառնակութիւնների կողմակից չեն, աշխատում են իրանց կրօնակիցներին սխալ քայլերից հեռու պահել։

Ոչ միայն բէկերը, այլ և հասարակ թուրք գիւղացին առանց հայի օգնութեան անկարող է հողագործութեամբ պարապել։ Շատ ժամանակ չէ անցել, երբ տեղական խաշնարած թուրքերը սկսել են և հող վարել, ուստի դեռ անհմուտ երկրագործներ են, զուրկ տոկուն աշխատանքի ընդունակութիւնից, որովհետև հողագործութիւնը պահանջում է մարդուց լարել իր ամբողջ ոյժը կարճ ժամանակամիջոցում՝ գործը վերջացնելու համար։

Հետևեալ անեկդոտը ըէլիեֆ կերպով պատկերացնում է երկու ազգութիւնների իրար միջև ունեցած յարաբերութիւնը։—Մի թուրք բէկ հանդով անցնելիս տեսնում է, թէ ինչպէս իր հարկատու թուրք գիւղացին վիզը ծռած կանգնել է իր կոտրած գութանի մօտ, ակօսը կիսատ թողած։ Այդ տեսարանը խիստ զայրացնում է բէկին, որը սկսում է անխնայ գանակոծել գիւղացուն և ասել. «շուն, շան որդի, բա դու մի հայ «քիրվա» չունես, որ կարգին գութան շինէր քեզ համար. իսկ եթէ չունես, ինչու չես մէկը ճարում, որ քեզ վարելում, հնձելում օգնէր»...

Մի շաբաթ սրանից առաջ անձրևը փչացնում է թուրքերի Թարթառ գետից հանած առուների ամբարտակը (դահնա), որը գտնվում է հայ գիւղերի մօտ։ Տեղական դիրք ունեցող մի բէկ իրանց հարևան սարովցիներին գրում է հետևեալ նամակը, օգոստոսի 23-ից, որի պատճէնն ամբողջութեամբ բերում եմ այստեղ՝ ցոյց տալու համար, թէ որքան հայ և թուրք միմեանցից առնչութիւն ունեն։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀԱՅԵՐԻ ԵՒ ԹՒՐՔԵՐԻ ՀԱՐԵՒԱՆՈՒԹԻՒՆԸ

*(Նամակ Զիվանշիրի գաւառից)*

—

*Օգոստոսի 30 ին*

Այս կողմերում լարված դրութիւնը շարունակվում է առաջվայ պէս։ Հայ ու թուրք դէպի իրար խիստ կասկածոտ են դարձել, չեն վստահանում մէկը միւսի գիւղն այցելել։ Թուրքերը հաւաքվում են, ժողովներ են կազմում Թարթառում, Բարդայում և Զամիլլում, ձիաւորները դէս ու դէն են չափչփում և ոչ մի եզրակացութեան չեկած, ցրվում են իրանց տները։ Լեռնարնակ հայերը նոյնպէս իրար մօտ են հաւաքվում՝ իրանց գլխի ճարը տեսնելու... Այդ հաւաքումների մասին չափազանցրած լուրեր հաղորդվում են հակառակ կողմերին, և այդպիսով մարդկանց մտքերը յուզվում են, կրքերը գրգռվում։

Հայերը, ի հարկէ, երբէք մտադրութիւն չունեն նախայարձակ լինելու թուրքերի վրա կամ թէ սրանց ապրանքը թալանելու. եթէ մի բան անում են, դա զուտ ինքնապաշտպանութեան նպատակի համար է լինում։ Մինչդեռ թուրքերի մի որոշ մասն եթէ կարողանայ, իսկոյն կը յարձակվի հայերի վրա, գըլխաւորապէս թալանն աչքի առաջ ունենալով։ Պէտք է խոստովանել, որ խռովութիւն ցանկացողը գլխաւորապէս այն անհանգիստ տարրն է, որը նոյն իսկ խաղաղ ժամանակները իր օրվայ պարէնը հայթայթում է գողութեամբ և աւազակութեամբ։ Ահա, օրինակ այդ տեսակ անհատներից մէկը ձի հեծած դիմում է արտեղ ու այստեղ, փրփուրը բերանին պատմում է հայերի մասին անլուր զրպարտութիւններ, աւելացնելով, թէ հարևան այս ինչ հայի մօտ հաւաքվել են 500 ձիաւոր՝ թուրքերի վրա յարձակվելու մտադրութեամբ. արդ՝ ի՞նչու իրանք էլ չը հաւաքվեն և «խմբեր» կազմեն հայերի նման։

Միամիտ թուրք գիւղացիները հաւատ են ընծայում ագիտատորի խօսքերին, ամեն կողմից հաւաքվում են նախօրօք որոշած տեղը՝ իրանց ունեցած-չունեցածն անտէր թողնելով։ Ագիտատորի ցանկացածն էլ հէնց այդ է. խոկոյն իր արբանեակներին նա ուղարկում է և քշել տալիս անպաշտպան ոչխարն ու տաւարը։ Վերջին ժամանակները այդպիսի դէպքեր յաճախ են պատահում։ Օրինակ, ամսիս 26-ին քեօլանիները գալիս են Կարակոյուն գիւղը, որը կված է Թափ մալականների գիւղին, որ կարակոյունցիներից էլ ձիաւորներ հաւաքեն։ Կէս գիշերին, երբ ամենքը քնած են լինում, քեօլանիները վեր են կենում և իրանց հիւրընկալ հարուստ խաշնարած Հասան-Ալուց գողանում են 10 հատ տաւար։ Երբ կողոպտված կարակոյունցիները հետևեալ օրը գալիս են քեօլանիների գիւղը և աղերսում իրանց տաւարը յետ դարձնելու, քեօլանիները խլում են նրանց հրացանները և դատարկաձեռն բաց թողնում։

Կան թուրք բէկեր, որոնց ապրուստը գալիս է հայ գիւղացու ձեռքով. նրանց հողը հայն է վարում, արտը հնձում, խոտը հարում. առանց հայի նրանց տնտեսութիւնը կը քայքայվէր։ Ահա այդպիսի թուրքերը խառնակութիւնների կողմակից չեն, աշխատում են իրանց կրօնակիցներին սխալ քայլերից հեռու պահել։

Ոչ միայն բէկերը, այլ և հասարակ թուրք գիւղացին առանց հայի օգնութեան անկարող է հողագործութեամբ պարապել։ Շատ ժամանակ չէ անցել, երբ տեղական խաշնարած թուրքերը սկսել են և հող վարել, ուստի դեռ անհմուտ երկրագործներ են, զուրկ տոկուն աշխատանքի ընդունակութիւնից, որովհետև հողագործութիւնը պահանջում է մարդուց լարել իր ամբողջ ոյժը կարճ ժամանակամիջոցում՝ գործը վերջացնելու համար։

Հետևեալ անեկդոտը ըէլիեֆ կերպով պատկերացնում է երկու ազգութիւնների իրար միջև ունեցած յարաբերութիւնը։—Մի թուրք բէկ հանդով անցնելիս տեսնում է, թէ ինչպէս իր հարկատու թուրք գիւղացին վիզը ծռած կանգնել է իր կոտրած գութանի մօտ, ակօսը կիսատ թողած։ Այդ տեսարանը խիստ զայրացնում է բէկին, որը սկսում է անխնայ գանակոծել գիւղացուն և ասել. «շուն, շան որդի, բա դու մի հայ «քիրվա» չունես, որ կարգին գութան շինէր քեզ համար. իսկ եթէ չունես, ինչու չես մէկը ճարում, որ քեզ վարելում, հնձելում օգնէր»...

Մի շաբաթ սրանից առաջ անձրևը փչացնում է թուրքերի Թարթառ գետից հանած առուների ամբարտակը (դահնա), որը գտնվում է հայ գիւղերի մօտ։ Տեղական դիրք ունեցող մի բէկ իրանց հարևան սարովցիներին գրում է հետևեալ նամակը, օգոստոսի 23-ից, որի պատճէնն ամբողջութեամբ բերում եմ այստեղ՝ ցոյց տալու համար, թէ որքան հայ և թուրք միմեանցից առնչութիւն ունեն։

չեն, եթէ միայն այդ հեռագիրների առաջինում ամենագծած կերպով շօշափված չը լինէր ձեր բարի անունը և պատիւը։

Նպատակ չունենալով հերքել այն զզուելի սուտը, որը բարդվում է ձեզ վրա յիշեալ հեռագրում, որովհետև դուք կարիք չունէք որ և է պաշտպանութեան, ես, ճանաչելով ձեզ և ձեր անբիծ գործունէութիւնը, իմ պարքն եմ համարում արտայայտել իմ սաստիկ վրդովմունքը յիշեալ հեռագրում ձեզ հասցրած վիրաւորանքների առիթով, ինչպէս և իմ ամենախորին արհամարհանքը դէպի անօնիմ ստորագրութեան տակ թագնվող անձինքը։

Աւելորդ չեմ համարում յարակցելու, որ այսօր ես՝ իբրև Բագուի խաղաղարար յանձնաժողովի անդամ, մի հեռագիր ուղարկեցի Բագուի խաղաղարար յանձնաժողովի նախագահ Քեամիլ-բէկ Սաֆարալիեվին հետևեալ բովանդակութեամբ. «Խորին վրդովմունքով կարդացի ես այսօր Պետերբուրգի մի քանի լրագիրներում երկու հեռագիր Բագուից հետևեալ անօնիմ ստորագրութիւններով. «Բագուի մուսուլմաններ» և «Բագուի մուսուլմանների ներկայացուցիչ»։

Հայերի և թուրքերի մէջ տեղի ունեցող արիւնալի ընդհարումներին վերջ դնելը կարելի է ոչ թէ կրքերը բորբոքելով և գծած ստութիւններով, այլ հանգիստ վերաբերվելով գործին և պարզելով այն բազմատեսակ և լուրջ հարցերը, որոնց իբրև հետևանք առաջանում է արիւնալի ընդհարումը. յոգուտ մարդասիրութեան, պետական իրաւական կարգի և երկրի խաղաղ կուլտուրական ծաղկման անհրաժեշտ է պարզել այդ հարցերը և նրանց հեռացնել մի անգամ ընդմիշտ։ Ռուսաստանը և ռուսաց հասարակութիւնը անկեղծ կարիք են զգում գործի անաչառ և լիակատար լուսաբանութեան, մինչդեռ յիշեալ հեռագիրները ոչ միայն դէպքերի ճշտութեան դէմ են մեղանում, այլ և լցված են գարշելի ստութիւններով պ. Կ. Գօնօմարեվի հասցէին։ Յիշեցնում եմ ձեզ որ Բագուում խաղաղարար յանձնաժողովի նիստերից մէկում բարձրաձայն յայտարարվեց որ Բագուում որ և է «հայկական» լրագիր գոյութիւն չունի. արդ՝ ինչպէս է, որ անօնիմ մուսուլմանները պնդում են, թէ Գօնօմարեվը Բագուում հրատարակվող «Հայ Թերթի» գործակալն է և ինչի վրա է հիմնված այն մեղադրանքը, թէ Գօնօմարեվը ուղարկված է հայերից Պետերբուրգ և ապրում է հայերի հաշուով։ Այդ վրդովեցուցիչ և գծած ստութիւն է, եթէ աւելին չասենք, և ես կարծում եմ, որ ձեր և խաղաղարար յանձնաժողովի,—եթէ նա դեռ գործում է, պարտականութիւնը պիտի լինի հերքել այդ բոլորը ինչպէս և պատռել անօնիմների դիմակը։

Երդ. հաւատ. Ալ. Բ. Ասրիբէկով

Ց. Գ. Խնդրում եմ ուրիշ լրագիրները արտատպել այս նամակը։

---

## ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԿԸ

—

Բագուի փողոցներում արիւնը դեռ հոսում է։ Նաւթադաշտը դեռ մխում է, մինչև երկինք հասցնելով մարդկային այրվող դիակների ճենճերային հոտը։

Բագուի այդ հսկայական ոճիրը կազմակերպված ու նախապատրաստված մի գործ էր։

Առ հասարակ թէ Նախիջևանի, թէ Երևանի և թէ Շուշու բոլոր կոտորածները, հրդեհները ու գաղանութիւնները կրում են իրանց մէջ որոշ ծրագիր։ Ամեն մի քայլափոխից երևում է, որ մի կամ մի քանի ճարպիկ ձեռքեր ղեկավարում են այդ հրէշաւոր դէպքերը, տիրաբար հրաման են արձակում, իսկ կատաղած թուրքը խուժանը, «Եա Ա՛լի» աղաղակելով առաջ է շարժվում կամ դադար առնում։

Այլ ևս ոչ մի կասկած չէ կարող լինել, որ կանաչ դրօշակները, չալմայաւոր սէյիդները և կրթված կամ տգէտ բոլոր գլխաւոր պրօպագանդիստները կապված են մի ուրիշ, աւելի բարձր ու օտար աղբիւրի հետ։ Բայց հարցը դրանում չէ. ինչ որ ամենքի համար պարզ աշկարայ է, դրա վրա այլ ևս կանգ առնել չարժէ։

Մեզ հետաքրքրում է մի այլ երևոյթ։

Կովկասի այս ոճրագործ շարժումը, անկասկած, ունի իր կազմակերպող մարմինը երկրի ներսում։ Չը գիտեմ թէ ովքեր են եղել Երևանի ու Նախիջևանի ոճիրները կազմակերպող կոմիտէների անդամները, բայց մի բան հաստատ գիտեմ,—դա այն է, որ Բագուի ոճրի հեղինակները ինքիցիատորների պաշտօն են կատարում։

Նրանց ճանաչում է քաղաքի ու շրջակայքի ամբողջ ազգաբնակութիւնը։ Նրանց անունով են երդվում Շուշում ու Գանձակում, Ղազախում և Երևանում...

Այսօր ոճիրների այդ կազմակերպող ղեկավարները, հսկայական հրդեհներից ու աւերումներից ոչ մի մազվնաս չը կրելով, ահագին նիւթական զրկանքներ են պատճառում ուրիշներին։ Նրանցից շատերի առևտուրն է արագ զարգանում, մի քանիսի նաւթն է ահագին գնով ծախվում, միւսները հայերի հանքերից կողոպտված իրերով են հարստութիւն դիզում։

Նրանք ոճիրն սաեղծեցին, արիւնոտ գործը կազմակերպեցին։ Նրանք հրդեհեցին, քար ու քանդ արին ծաղկած Նաւթադաշտը։ Նրանք տասնեակ հազարաւոր բանւորների թշուառութեան պատճառ դարձան։ Նրանց ոճիրներից ՁՆասվեցին հայ, վրացի պարսիկ և նոյն իսկ թուրք բանւորները։

Զրկանք ու սով է Նաւթադաշտում, արիւն ու արցունք է տիրում այնտեղ։ Կսկիծ, թշուառութիւն, հառաչանք հեծկլտոց է լսվում այնտեղից։

Այդ ոչինչ։

Այժմ թուրքերը բարերարներ են հանդիսանում։

Եթէ երբ և է մարդկութիւնը տեսել ու լսել է մի նողկալի ծաղր, մի գարշելի ու պիղծ հայոյանք մարդկային բարութեան ու ողորմածութեան հասցէով,—անկասկած, թուրքական այս վերջին արարքը դրանց թագն ու պսակը կը կազմէ։

Այո, Բագուի թուրք աղաները լկում են ողորմածութեան, բարեգործութեան գաղափարը։

«Կարելի է ոճիր գործել և ծիծաղել», ասում է Հավլէթն իր մօր մասին։

Կարելի է հրէշ-ոճրագործ լինել և բարեգործութեան դիմակ հագնել։

Բագուի «Ղուրի մէլլանում» հաց է բաժանվում բոլոր աղքատ բանւորներին, առանց կրօնի խտրութեան։

Հայը չէ գնում այդ թուրքական թաղը։ Ուրեմն հացը բաժանում են միայն ռուսներին։

Դարձեալ մի աչքակապութիւն։

Դարձեալ։

*Խաժակ*

---

## ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

*Սպիտակ քաղաքից օգ. 29-ին*

Նախորդ նամակը գրելուց յետոյ, շատ բան եկաւ անցաւ մեր գլխից։ Մեզանից մօտ գտնվող Թուրք Քեշլու գիւղին կպած կայ և մի երեսուն տնից բաղկացած հայկական կօլոնիա, որի բնակիչները ինքնապաշտպանութեան միջոցներից զուրկ չեն։ Այդ երեսուն տնից զատ, բաւական անջատված և թուրք գիւղին էլ բոլորովին մօտիկ կայ դարձեալ մի հինգ տուն հայ բնակչութիւն։ Ահա այդ հայերի մասին չորս օր առաջ տարածվեց մի տխուր լուր, թէ իբր թուրքերը պաշարել են նրանց և սպառնում են։ Իսկոյն այստեղ բոլոր խանութները փակվեցին, այստեղի մեծամասնութիւն կազմող ռուսները լեղապատառ թափվեցին Շիբաեվի գործարանը և ահ ու դողով սպասում էին թուրքերի գալուն։ Մենք, հայ տղամարդիս, իսկոյն մեզ համար դիրքեր գրաւեցինք կտուրների վրա և անհամբեր սպասում էինք... Վերջը երևաց, որ այդ երկիւղները անհիմն են և միայն հայերի հինգ տունն են կրակել, որոնց բնակիչները օր առաջ քաշված են եղել մեծամասնութիւն կազմող ազգակիցների մօտ։ Պատմում են, որ Քեշլու թուրք գիւղը ոչ թէ յարձակողական միտք է ունեցել, այլ պաշտպանողական...

Այստեղ երկիւղ էին կրում և Թաղիեվի կտաւագործարանից, որի մէջ թուրք բանւորները մեծ թիւ են կազմում և դրանց մէջ էլ անհանգիստ տարրեր շատ կան, բայց դրա դէմ ունենք Մանթաշեանի իւղագործարանը, որը գիշեր ու ցերեկ անդուլ հսկում է։

Մի քանի օր առաջ այստեղ մի թուրքի մանրուքի խանութ են կտրում և մի քիչ ուտելիք են գողանում. թուրքերը այդ մեղը գցեցին հայերի վրա այն էլ Մանթաշեանի գործարանի հայերի, որովհետև խանութը նը

---

## ՆԱՄԱԿ ԿԱՂԶՈՒԱՆԻՑ

—

*Սեպտեմբերի 4-ին*

Ինքնավարութեան տեղիս խորհրդակցական ժողովները վերջացան ամսիս 2-ին, որ սկսվել էին օգոստոսի 25-ին, ունենալով եօթը նիստ։ Ժողովներին մասնակցում էին 18 հոգի, 16-ը ընտրված մարդիկ, 2-ը նշանակված կառավարութեան կողմից։ Ընտրվածներից 8-ը հայեր էին, 3-ը յոյներ, 2-ը թիւրք, 2-ը քուրդ և 1-ն էլ մալական։ Ժողովներին նախագահում էր տեղիս հարկերի վերատեսուչ Իւան Ֆ. Բունէն, որը ղեկավարում էր պատշաճաւոր կերպով։ Ամենից ուրախալին այն էր, որ ժողովականները ամեն հարց լուծում էին յոգուտ ճնշված ժողովրդի։ Ամենագլխաւոր հարցերից երկուսն էլ լուծվեցին ցանկալի կերպով—օրինակի համար, ընդհանուր և անխտիր ձայնաւորութիւն ու մանր ինքնավարութիւն գիւղական շրջաններում ընդունվեց համարեա թէ միաձայն։

Վերջին նիստում չորս ներկայացուցիչների ընտրութիւնը կատարվեց և գիւղական ներկայացուցիչները հեռացան իրանց տեղերը։ Կարսի խորհրդակցական ժողովներին մասնակցելու համար ընտրվեցին մի հայ Գ. Բալասանեան, մի յոյն Ա. Սիմֆօրով և մի թիւրք տեղական ղաղին, իսկ Թիֆլիսի համար՝ Մ. Ղազարեան։ Այդ ժողովների յիշատակը անմոռանալի կացուցանելու համար, յարգելի վերատեսուչը ժողովի անդամներին միասին նկարեց, երբ ամենքն էլ խօսք տուին միմեանց, ուր էլ որ լինի, ի նպաստ ճնշված ժողովրդի խօսել ու աշխատել, և ցրվեցին։ Ընտրված չորս ներկայացուցիչները ամսիս 9-ին ներկայ են լինելու Կարսում։

Մ. Ղազարեան

---

ռելու իրանց ոչխարների համար։ Տանը ոչինչ չեն թողնում, նոյն իսկ խրճիթների դռները կրնդահան են անում և իրանց հետ վերցնում, տանում։ Ճանապարհին կահ-կարասիքի աւելորդը, արժէքաւոր իրերը, նոյն իսկ կանանց զարդարանքը, մի խօսքով «աղբուխը», պահ են տալիս հայ գիւղացիներին մինչև սարից վերադարձը։ Թուրքերը հայ գիւղերից անցնելիս իրանց հետ բերում են զանազան հիւանդութիւններ և վարակում հայերին։ Յայտնի փաստ է, որ հայ գիւղերում վարակիչ հիւանդութիւններ գլխաւորապէս երևում են թարաքամների չուից յետոյ։

Եթէ բանը հասաւ թշնամութեան, լեռնային կածաններում ու կիրճերում հայերը կարող են մեծ վնասներ հասցնել թուրքերին, նոյն իսկ անհնար դարձնել «եայլաղ» գնալը։

Առաջներն ով երբ ցանկանում էր կարող էր սար բարձրանալ և սիրտ ուղած տեղն իր վրանը կանգնեցնել։ Իսկ այժմ մի հասարակութեան պատկանող բոլոր գիւղացիները պարտաւոր են միասին և միաժամանակ չուել և նշանակած օրը տեղ հասնել։ Ոստիկանները նրանց ուղեկցում են գիւղից մինչև եայլաղը և արգելում են նրանց ճանապարհին կանգ առնել։ Ամեն մի գիւղացի ահա մի քանի տարի է պէտք է իր շրջանական անասնաբոյժից առանձին վկայական վերցնէ, թէ իր տաւարն ազատ է ժանտախտից, հակառակ դէպքում ճանապարհին նրան իր հօտերի հետ կանգնեցնում են։ Շնորհիւ այդ կարգադրութեան յաճախ պատահում են թիւրիմացութիւններ թարաքամների և ոստիկանների միջև։ Տգէտ թուրք հովիւն առանց բժշկական վկայական ուղղվում է դէպի սարերը։ Ճանապարհի կիսին ոստիկանները նրան կանգնեցնում են իր հօտերով և տաւարներով և արգելում են ոչ առաջ խաղալ և ոչ էլ յետ նահանջել մի քանի օրվայ ընթացքում, մինչև որ անասնաբոյժը վրա կը հասնէ և տաւարներին քննութեան կենթարկէ։ Այդ ժամանակամիջոցում խեղճ կենդանիները խիստ տուժում են ծարաւից և քաղցից։ Պատահում է, որ թարաքամներն արածացնում են իրանց ապրանքը մօտակայ հայերի մարգերում, որից և առաջանում են ընդհանուրումներ հայերի և թուրքերի միջև։ Երբեմն այդպիսի նեղ դրութեան ընկած թարաքամները աշխատում են զօրով սար բարձրանալ, ուստի յարձակում են գործում իրանց արգելք եղող ոստիկանների վրա։

Առհասարակ գիւղացիները, թուրք թէ հայ, խիստ տուժում են անասնաբոյժներից, որոնց թիւը Զհանշիրի գաւառում վեցի է հասնում (իսկ մարդկանց համար միայն մի բժիշկ կայ)։

Տեղ հասնելուն պէս՝ թարաքամներն առաջվայ պէս չեն ցրվում սարերում, այլ կառավարութեան հրամանի համաձայն մի գիւղի բոլոր բնակիչները կառուցանում են իրանց վրանները մի տեղ իրար կողքի երկու շարքով, մէջտեղը թողնելով լայն փողոց, որի ծայրերին սիւների վրա գիշերները լապտերներ են վառում։ Այդպիսի «ամարանոցային գիւղում» ապրում են մի քանի ոստիկաններ։

Օգոստոսի սկզբից սկսած թարաքամները իջնում են սարից, ոչխարի հօտերն առ ժամանակ եայլաղում թողնելով, որ դան հնձած արտերը հաւաքեն և կալսեն։ Սարերից իջնելիս էլ նրանք պարտաւոր են միասին իջնել և ոչ մի տեղ երկար կանգ չառնել։ Այս դէպքում թարաքամների տանջանքներն աննկարագրելի են։ Քեօչին ուղեկցող ոստիկանները ստիպում են նրանց իր ժամանակին տեղ հասնել։ Յոգնած տաւարը ու մարդիկ օգոստոսեան կիզիչ ճառագայթների տակ նուազում են սովից և ծարաւից, որովհետև անկարող են ճանապարհին կանգ առնել։ Այս դժուարութիւններից ստիպված, ոմանք սիրտ չեն անում սար չուել և մնում են տանը։

Այս տարի թարաքամների դժբախտութիւնների վրա աւելացաւ մի նորը—սաստկացաւ գողութիւնը։ Այժմ թուրքն սկսել է ձի, տաւար, ոչխար գողանալ ոչ թէ հայից, ինչպէս առաջ էր լինում, այլ իր հարևան թուրքից, որովհետև հայերն սկսել են իրանց գիւղերում զինված պահապաններ դնել տեղ տեղ ցերեկներն անգամ։ Գողութիւնն այնպիսի մեծ ծաւալ է ստացել, որ շատ թարաքամներ մնացել են առանց ձիի ու տաւարի, և իրանց կահ-կարասիքները տուն տեղափոխելու համար, գալիս են հայերից տաւար փոխառնում (թարաքամները իրանց իրերը բարձում են եզների վրա)։

—Աղա, այս տարի թուրքերից կարգին մարդիկ պիտի մնանկանան, ասում էր հարեւան ունևոր թուրք գիւղացին.—այս տարի 5 մանէթի ապրանք չեմ ծախել։ Մսավաճառներն իմ «հալալ» տաւարին չեն մօտենում։ Եւ ինչու ինձ դիմեն, երբ գողացած 40 ռուբլի գին ունեցող տաւարը կարելի է տասով գնել։

Բանն այնտեղ է հասել, որ խաղաղ թուրք գիւղացիները դիմում են հարևան հայ բէկերին, որ սրանք իրանց հովանաւորութեան տակ առնեն և աւազակներից պաշտպանեն նրանց։

Այժմ թուրքերն սկսել են և մօլականներին էլ թալանել, որ առաջ տեսնված բան չէր այս կողմերում։

Թարաքամներին և հայերին քիչ վնաս չեն հասցնում և քեօլանիները։ Այս աւազակաբոյ թուրք ցեղը գաղթեցրած է Զհանշիրի գաւառն Իբրահիմ-խանի ժամանակներից։ Յայտնի է, որ Փանահ ու Իբրահիմ խաները Ղարաբաղի հայ մելիքներին յաղթելու և վերջնականապէս հպատակացնելու նպատակով, հրաւիրում էին դաշտաբնակ թափառականներին և բնակեցնել տալիս սարերում, հայերի կողքին։ Քեօլանիներին բերել տուողն Իբրահիմ-խանն է լինում։ Սրանք թափառում էին Կուր գետի աջ ափին և 1790 թուականին տեղափոխվում են Ղարաբաղ և տեղաւորվում Թարթառ գետի ձորերում, ծմակներում և քերծերում. հէնց դրա համար էլ նրանց կոչում են քեօլանիներ (անտառաբնակներ)։ Այժմ քեօլանիները ցրված են Թարթառի ամբողջ երկարութեամբ, զուրկ են ապրուստի միջոցներից հողի սակաւութեան պատճառով, ուստի ամբողջ ցեղով պարապում են գողութեամբ։ Միւս թուրքերը պակաս չեն քեօլանիներից։

Ահա հայն ինչ հարևանութիւն ունի։ Դրա մասին նա պէտք է շատ լրջօրէն մտածէ և աշխատէ իր համար modus vivendi գտնել։

*Մխիթար*

## ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

*Սեպտեմբերի 8-ին*

Հայ-թուրքական յարաբերութիւնները մեր քաղաքում ու դաւառում գնալով աւելի են լարվում ու սպառնալի կերպարանք ստանում. մթնոլորտում օրէցօր կուտակվում են պայթուցիկ նիւթեր։ Օր չէ անցնում հաստատ, որ քաղաքի կամ դաւառի այս կամ անկիւնում յուզիչ դէպք չը պատահի, երկու կողմերն էլ զրգռող ու առանց այն էլ լարված յարաբերութիւնները աւելի լարող։ Եթէ որ և է դէպքից տուժում են հայերը, ամեն կերպ ճիգեր են անվում դեռ զսպել երիտասարդ տարրերը. անընդհատ առաջարկվում է նրանց պաղարիւն, համբերող լինել ու ինքնապաշտպանութեան շրջանակից դուրս չը գալ ընաւ, չը լինել նախայարձակ, չը յարձակվել կողոպտելու ու աւերելու նպատակով լոկ ու այդպիսով չը զցել, չը նսեմացնել հայ ժողովրդի, իբրև կուլտուրական ցեղի, բարի համբաւը։ Հայ երիտասարդութիւնը, հայ կարիճ, քաջարի տղերքը, թէ քաղաքում և թէ գիւղերում, լաւ ըմբռնում, հասկանում են այդ, պահում են իրանց ըստ արժանւոյն, կազմ ու պատրաստ լինելով միշտ միմիայն ինքնապաշտպանութեան համար, որի սահմաններից դուրս գալու ցանկութիւն նրանք ու նրանց արիութեան, անվեհերութեան ու տղամարդութեան վրա իր յոյսերը դնող հայ ժողովուրդը բնաւ չունեն։ Հայ ժողովուրդը, մանաւանդ երկրագործ, գիւղական հայ ժողովուրդը, որի կեանքի մեծ մասը անցնում է գիւղից դուրս, դաշտում, սարերում, ձորերում ի սրտէ ցանկանում է բարի հարևանութեան կապերը պահպանել իր դրացի թուրքերի հետ, բայց միևնոյն ժամանակ մտադիր չէ թոյլ տալ մորթոտել իրան ոչխարների պէս ու աւերել, յափշտակել իր գոյքը, կարողութիւնը, որը նա ձեռք է բերել արիւն քրտինքով, արդար վաստակով կամ, ըստ իր, հալալ աշխատանքով, անպայման հալալ աշխատանքով, այլ ոչ կողոպուտով ու սրածութեամբ...

Ամսիս 4-ին մի խումբ սպառազինված թուրքեր, թւով մօտ քսան հոգի, Փիր գիւղի լեռներում, Աղուեսաշէն անուն կրող տեղում, որտեղ ամառը պահվում են փիրեցիների նախիրները ու հօտերը, գաղտագողի յարձակվում են հօտերի վրա ու ըշում ձիաների մի երամակ, բաղկացած մօտ 70 ձիուց։ Հովիւները նկատելով այդ, իսկոյն մարդ են ուղարկում գիւղը, իսկ իրանք աւազակների ճանապարհի վրա դիրքեր բռնում. շուտով գիւղից տղերքը օգնութեան են հասնում. սկսվում է կռիւ, որը տևում է մօտ երեք ժամ։ Աւազակները իջնում են ձիաներից ու քարերի ետևը քաշվում, կրակում են այնտեղից, սպառնալով աւերել, քարուքանդ անել Փիր գիւղը, եթէ փիրեցիները չը քաշվեն կուից. բայց Փիրի քաջարի երիտասարդները այդ սպառնալիքին ընաւ ուշադրութիւն չեն դարձնում, կռւում են հերոսաբար, անվեհերութեամբ, չը նայած որ թւով ու ռազմամթերքով գերազանցելիս չեն լինում թուրքերին։ Փիրեցիները խլում են ոչ միայն իրանց ձիաների երամակը, այլ և 7 ձի թուրքերից ու երկու արագաձիգ հրացան իրանց փամփուշտակալներով։ Մեր տղաներից թեթև վիրաւորվում են երկու հոգի. թուրքերը ձեռնունայն փախչում են, տանելով իրանց հետ իրանց վիրաւորներին։

Այն ժամանակ, երբ կռիւը բռնկվում է Աղուեսաշէնի ձորում, լուրեր են հասնում դէպքի մասին շրջակայ գիւղերը (Խաչակապ, Բանանց, Վերի-Քարհատ, Ներքի Քարհատ, Կիրանց, Զովդաւ), որտեղից հայ կարիճ երիտասարդների խմբերը իսկոյն հասնում են Փիր ու կենտրոնանում այնտեղ։ Երիտասարդոյժերի համախմբումը նկատելով, թուրքերը, պարտութիւն կրելով ու փախչելով կռւի վայրից, չեն յանդգնում մեծ թւով գալ ու յարձակվել Փիրի վրա։

Գարաք եմ հաստատում մի բարի խորհուրդ տալ մեր հարևան թուրքերին, որոնց հետ ի սրտէ ուզում ենք հաշտ, լաւ, բարեկամաբար ապրել, ինչպէս ապրել ենք մինչև օրս։ Փիրում համախմբված հայ կարիճ երիտասարդները, եթէ օժտված լինէին գիշատիչ բնազդներով, չէ՞ որ կարող էին, արդարացի զայրոյթից դրդված, յարձակվել շրջակայ որ և է թուրք գիւղի վրա ու ջնջել նրա բնակիչներին. բայց նրանք այդ չեն արել, երբէք չեն անի, անմեղներին երբէք չեն պատժի, քանի որ հայ ժողովուրդը բնաւ արատադիր չէ քաջալերանք դարձնել իր ու իր դարաւոր հարևանների կեանքը, արատադիր չէ քանդել, աւերել, դժոխք դարձնել մեր, իր բնութեամբ գեղեցիկ, չքնաղ, բերկրալի երկիրը։ Թուրք ժողովրդի բարիքն էլ պահանջում է, որ նա էլ վարակվի նոյն հոգով ու նոյն ուղղութիւնը, նոյն դիտցիպլինան ներշնչէ իր երիտասարդութեան, իր անհանգիստ տարրերին, որոնք այժմս շատ սանձարձակ են ու անզուսպ։

Ստ. Տէր-Աւետիքեան

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

*Ռոստով, սեպտեմբերի 1-ին*

Մեր երկը՝ «Հայկական հարց և հայկական կոտորածներ Ռուսաստանում» հարիւր օրինակ մենք տպել ենք շքեղ թղթի վրա, նշանակելով գինը ոչ պակաս 10 ռուբլուց և նրա վաճառքից գոյանալի ամբողջ գումարը—1000 ռուբլի յատկացրել ենք անգութ կոտորածներից դժբախտացած հայ զոհերի արդար դատի և առ հասարակ ամբողջ գործի անաչառ լուսաբանութեան ու պաշտպանութեան գործին, տպագրական խօսքի միջոցով, համաձայն մեր առանձին ցուցմունքի, որ մենք յայտնել ենք պ. Հ. Առաքելեանին, որը և յանձն է առել այդ գործի կազմակերպութիւնը։

Ստացած լինելով արդէն 31 օրինակների գինը—325 ռ. ուղարկում ենք խմբագրութեանդ նուիրատուների ցուցակի հետ, այն է՝ Անպէտքեան-Յովնանեան—15 ռ., եղբ. Յովնանեան (2 օր.) 25 ռ., Հալլաճեան, Մ. Բախսիսեան, եղբ. Խորվաթեան, Յ. Բալեան, Յ. Ծառուկեան, եղբ. Սրմաքեշեան, Մ. Զերնեան, Ն. Զերնեան, Սր. Չիվելիկեան, Ստ. Չեվելիկեան, Լ. Բարոնեան, եղբ. Խուդավերդեան, Յ. Զայլախեան, Խ. Գինչողուեան, Կ. Շաղնիկեան, Ս. Խնձորեան, Ա. Քիստեան, եղբ. Քիստեան, Կ. Պօղոսեան, Ս. Մէսերեան, Յ. Քայալեան—10-ական ռուբլի։ Պօղոս, Խ. Տրապիզոնցեան, Григорій Золотухинъ, Յ. Քայալեան, Ստ. Քայալեան, Մ. Ասլանեան, Գ. Մամուլեան և Կ. Թիթրեան—75 ռուբլի։ Ընդամենը—325 ռ.։

Մեզ մօտ մնում է 69 օրինակ, որ և յանձնում ենք բարեսիրտ և ազնիւ սրտերի գթառատ և կարեկից ուշադրութեան։

Գր. Զալխուշեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է $1^1/_2$ թերթից։

—

Բագուի ժամանակաւոր գեներալ նահանգապետը սեպտեմբերի 6 ից հեռագրում է Փոխարքայի քաղաքացիական մասի օգնականին. «Անցած գիշեր և մինչև այժմ քաղաքում և նաւթահանքերի շրջանում առանձին դէպքեր չեն պատահել։ Սպանված են թուրքերից—մէկ, հայերից—երկու հոգի. վիրաւորված են թուրքեր—երեք, հայեր—երկու, ռուսներից մէկը։

—

Բագուի նաւթարդիւնաբերող Ռոշիլդ ֆիրման անհագին պահանջ է յայտնել ռուս կառավարութեանը։ Նա պահանջում է 50 միլիոն ռուբլի, որպէս զի 6 ամսում վերանորոգէ վերջին խառնակութիւնների ժամանակ իր ունեցած բոլոր կորուստները։

—

Մեզ հաղորդում են, որ ամսիս 4-ին Մողնու եկեղեցում ընտրված չորս հոգաբարձուները—պ. պ. բժ. Տ. Թադէոսեան, Հ. Առաքելեան, բժ. Լ. Քալանթարեան և Գ. Քալանթարեան հաստատված են իրանց պաշտօնի մէջ թեմիս առաջնորդի կողմից։ Այդ 4-ը և Մողնու եկեղեցու երէցփոխ պ. Աւ. Աբրահամեան կը կազմեն ծխական հոգաբարձութիւն։

—

Շուշու ջնջված հայերի օգտին ստացանք Կրասնովոդսկ քաղաքի հայերի շրջանում հաւաքած Արշ. քահ. Վարդանեանի միջոցով 310 ռուբ. 60 կ.

—

Նախիջևանի աղէտի զոհերի օգտին՝ 1) Խարկովից Մ. Սարգսեանի միջոցով 40 ռուբլի, 2) գործող բանակից 25 ռուբլի, 3) Անապայի և եկւոր հայ ժողովուրդից 31 ռուբլի. 46 կոպէկ։

—

Վերջին աղէտներից վնասվածների օգտին ստացանք 1) պ. Ալիբէկեանից 5 ռուբ., 2) պ. Ղուկասեանից 5 ռուբլի, 3) Եւրոպական կիսակոշկակարների համքարի աւագ Գապիկեանի ընտրութեան պատճառով փոքրիկ հացկերոյթի ժամանակ հաւաքած 16 ռուբ. 4) Նուխուց տիկ. Զ. Ասրեանից 5 ռուբլի։

—

Ստացանք պ. Ղարագեօզեանի միջոցով հայ աղէտեալների օգտին 3 ռուբլի տօնախմբութեան օրը ուղարկվելի ծաղկեփնջի փոխարէն։

—

Մի քանի խեղճ բանւորներ և գործակատարներ դիմում են մեզ և յայտնում, որ իրանք ցանկանում են վերադառնալ իրանց ապրիւնոտված հայրենի վայրերը (Նախիջևան, Շուշի, Զանգեզուր), բայց մի քանի «խօզէին-ներ» վաշխառուներ, թուրք խուժանից ոչ պակաս անսիրտ, հաւաքել պահել են իրանց մօտ դրանց խնայած կօպէկները և չեն տալիս... Ու դրանք դեռ կոչվում են մարդիկ, հայեր։

—

Բագուի գեն.-նահանգապետի հրամանով զօրքերը չը պէտք է կրակեն այն տների վրա, ուր օտարերկրեայ հիւպատոսներ են բնակվում, եթէ նոյն իսկ այդ տներից զէնք պարպեն դէպի փողոց։ Դրա փոխարէն պէտք է տնատէրերի վրա 3000 ռ. տուգանք դրվի։—Շատերն օգտվելով այդ կարգադրութիւնից, զանազան պետութիւնների դրօշակներ են կախել իրանց տների ճակատից, այնպէս որ սատիկ աճել է հիւպատոսների բնակարանների թիւը։ Բագուի ոստիկանապետը հրամայել է պրիստաւներին ստուգել և տեսնել, թէ արդեօք յիրաւի՝ այն բոլոր տներում, որոնց վրա դրօշակ է ցցած, բնակվում են հիւպատոսներ։

—

Բագուի I քաղաքամասի պրիստաւը միջնորդութիւն է յարուցել ոստիկանապետի մօտ, որ գօրգօվօյ Գիւլ-Մահմէդ-Մօլլա-օղլուն տրվի փողային օժանդակութիւն, որովհետև նա յուլիս ամսին անյայտ անձի ձեռքով վիրաւորվելով պաշտօնավարութեան ժամանակ կորցրել է աշխատանքի ընդունակութիւնը։—Ոստիկանապետը միջնորդում է քաղաքային դումային, որ այդ թուրք գօրգօվօյին տրվի և միանուագ օժանդակութիւն, և կենսաթոշակ։—Բայց ահա այն ոստիկանապետ պ. Իւզբաշը, որ այդքան ընդոյզ զգացմունքներ է տածում դէպի մի գօրգօվօյ, ոչ մի միջոց չէ ձեռք առնում թուրքերի դէմ, երբ նրանք կողոպտում, քանդում և հրդեհում են 10 հայ տներ Զէմբերէքնդ թաղում։ Պ.պ. Մատիկոնեան, Կ. Դաւթեան և Ս. Գելանչեան տնատէրերը բողոք են յայտնել ոստիկանութեան դէմ և պահանջում են իրանց վնասները—մէկը 10,000 ռ., միւսը 5000 և երրորդը 10,000։ Ա՛յ թէ մինչև որ աստիճան անարդարութեան և անբարեխղճութեան է հասել Բագուի ոստիկանութիւնը։

—

Ն. Ի. Թամամշեանը դիմել է Փոխարքային և խնդրել, որ իրան թոյլ տրվի Գանձակում հրատարակել մի թերթ «Елизаветпольскій Вѣстникъ» անունով, այն ծրագրով՝ որով նոյն պարոնը Թիֆլիսում հրատարակում է «Кавказскій Листокъ»

—

Լուրերին նայելով, Վարշաւայի գեներալ-նահանգապետ Սկալօնը թողնելու է իր պաշտօնը։ Ասում են, որ նրան յաջորդելու է գեներալ բարոն Մէյէնդորֆը, որին իբր թէ տրվելու է Լեհական թագաւորութեան Փոխարքայ տիտղոսը։ (Р. Сл.)

—

Ռուսաստանի պետական պարտքը 1906 թւի բիւդջէտի համաձայն՝ յունվարի 1-ին կազմելու է 615,405, 312 ռուբլի։ Պետական պարտքերին վերաբերեալ բոլոր ծախքերը—փոխառութեան տոկոսները, շինուցանելու բաժինը և այլն—հասնելու են 1906 թւին 334,729,831 ռուբլու։ 1905 թւից 31,711,881 ռուբլի աւելի։ Պետական պարտքը շատացել է երկու խոշոր, փոխառութիւնների պատճառով — առաջին՝ $231^1/_2$ միլիոն ռուբլի $4^1/_2$% ով և երկրորդ՝ 400 միլիոն՝ 5% ով։ (Б. Вѣд.)

—

Անցեալ 1904 թւի վերջին, Ռուսական կայսրութեան մէջ, բացի Ֆինլանդիայից, լոյս էին տեսնում 1350 պարբերական հրատարակութիւններ։ Դրանցից ռուսերէն էին 1078 հատ, լեհերէն —130, գերմաներէն —55, էստոներէն —19, լատիշերէն—23, հայերէն—7, վրացերէն —6, ֆրանսերէն—6, հին-հրէերէն—4, նոր հրէերէն—2, ֆիններէն—1, թուրքերէն—1։ Միւս բոլոր լեզուներով 17 հրատարակութիւններ են եղել։

—

ՄԱՅԿՕՊԻՑ մեզ գրում են. «Հինգշաբթի, օգոստոսի 25-ին, կայացաւ Մայկոպի ս. Լուսաւորիչ եկեղեցու օծումը։ Թեմիս առաջնորդ Սեդրակեան արքեպիսկոպոսը, Վլադիկավկազից, Արմաւիրից հրաւիրված քահանաների հետ միասին, կատարեց եկեղեցու հանդիսաւոր օծումը։ Ներկայ էին բարձրաստիճան անձնաւորութիւններ և հազարաւոր եկւոր հիւրեր զանազան քաղաքներից և գիւղերից։ Եկեղեցում ասեղ գցելու տեղ չը կար։ լիքն էր և եկեղեցու բակը և շրջապատը։ Ներկայ էր և ռուս հոգևորականութիւնը։ Քառաձայն երկսեռ խումբը երգում էր առաջին անգամ Մայկօպում Ե. Բաղդասարեանի ղեկավարութեամբ, որը հրաւիրված էր յատկապէս այդ օծման հանդիսաւոր տօնի առիթով։ Երգեցիկ խումբն իր ներդաշնակ երգեցողութեամբ իր վրա էր դարձրել բոլորի ուշադրութիւնը։ Պատարագից յետոյ եկեղեցու բակում մատաղ էր պատրաստված։ Եկեղեցու օծումից յետոյ տեղիս ամարային ժողովարանի դահլիճում պատրաստված էր ճաշ հիւրերի համար։ Ճաշին ներկայ էր Արխտակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը, քահանաներ, քաղաքագլուխը, ուպրավայի անդամները, բէալական դպրոցի դիրեկտորը, զինուորական և այլ ատիճանաւորները։ Ճաշի ժամանակ առաջարկվեցին կենացներ, Թագաւոր Կայսրի և Թագուհի Կայսրուհու, Վեհափառ Կաթողիկոսի, Կովկասեան Փոխարքայ Կ. Ի. Վօրոնցով-Դաշկովի, Արխտակէս արքեպիսկոպոսի, քաղաքագլխի, տեղիս ատաման-Օդինցինի, եկեղեցու հիմնադիր պ. Թերզեանի այրի կնոջ, տ. Թերզեանի, կոմիսիայի անդամների, որոնք և շարունակել են սկսված գործը, Ե. Բաղդասարեանի, որ ոչինչ չէր խնայել առանձին շուք տալու իր խմբով, ուսուցչարանի տեսուչ Տամանեանի և այլն։ Ճաշի ժամանակ նուագում էր տեղիս զինուորական երաժշտական խումբը։ Ճաշը տեւեց մինչև ժամը 6-ը։ Նոյն օրը երեկոյեան ներկայացան սրբազանին տեղիս ներկայացուցիչները, պ.պ. Խորասանեան՝ Զիբիթչեան, Շապոշնիկեան, Թերզեան, Կարապետեան, Տէր-Պողոսեան, Բաղդասարեան, Աւշարեան, որոնք երեկոյեան ընթրիքի ժամանակ հայ դպրոցների բացման առիթով խորհրդակցելուց յետոյ իսկոյն և եթ կամաւոր նուէրների գումարը հասցրին 900-ի, Զիբիթչեան միանուագ ամեն տարի 200, Խորասանեան 200, Տէր Պողոսեան 100, Թերզեան 100, Կարապետեան 100, Աւետիսեան 100, տիկ. Թերզեան 100. հաւանական է, որ այդ գումարը կը կրկնապատկվի, որովհետև ընթրիքին ներկայ չէին շատ և շատ անձնաւորութիւններ»։

—

ԳՐՕԶՆԱՅԻՑ մեզ գրում են. «Երկուշաբթի, օգոստոսի 15-ին, այստեղի հասարակական դահլիճում, Նախիջևանի աղէտից ազատվածների օգտին տեղի ունեցաւ հայկական համերգ, խմբապետ Ս. Եսայբէկեանի ղեկավարութեամբ։ Ծրագիրը բաւականին հարուստ էր, բաղկացած 6 մասից։ I և II գոլ ծողութեանը երգում էր երկսեռ քառաձայն խումբը, III գոր-ծողութեանը երեխաների երկձայն խումբը, IV և V-ը՝ վօդէվիլներ (Դիկտոր Թաթոս և 200,000), իսկ վեցերորդը կենդանի պատկեր։ Երգեցիկ խումբը երգում էր երաժիշտ Մ. Եկմալեանի «Ով հայոց Աստուած» մելոդիան։ Համերգը շատ լաւ ապաւորութիւն թողեց հասարակութեան վրա, մանաւանդ 8—12 տարեկան երեխաների խումբը։ Ռուսախօս հայ մանուկները թոթովելով երգում էին «Եկ տխակ», «Աստղը ցոլաց», «Զիմ վզին», «Հոյ նազանըմ», «Մեր հայրենիք» և այլն։ Երգերի մեծամասնութիւնը երաժշտագէտ Մ. Եկմալեանի ելեգերից էին. լաւ երգեցին հանգուցեալի «Լռեց ամպերը», «Տէր կէցոն», «Հայոց Աստուած», «Ով դու բարեկամը»... որոնցից շատերը կրկնել տուեցին։ Ինչ վերաբերում է սիրողներին, բոլորն էլ հրաշալի կերպով կատարեցին իրանց դերերը։ Առանձնապէս նկատելի էր մեր ժողովրդի անտարբերութիւնը, մանաւանդ որ համերգը տրվում էր բարեգործական նպատակով։ Ինչպէս լսում ենք, զուտ արդիւնքը եղել է 100 ռուբլի։»

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԱՆՑԱՒՈՐՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

—

Ինչպէս Թիւրքիայի կենտրոնական քաղաքներում բանտարկված՝ նոյնպէս և բերդարգելութեան դատապարտված հայերի մեծամասնութիւնը քաղաքական յանցաւորներ են։

Թիւրքական օրէնքի համեմատ՝ քաղաքական յանցաւորների հետ պէտք է վարվել այնպէս, ինչպէս պատերազմական գերիների հետ։

Արդ, այդ օրէնքի համաձայն՝ պատերազմական գերիներն ու հասարակ յանցաւորները—գող, մարդասպան և այլն—մի և նոյն բանտը չունեն։ Առաջինների համար վերապահվում է մի այլ, փոքր ինչ աւելի մաքուր, աւելի յարմարութիւններ ներկայացնող բանտ։

Այդ օրէնքը հիմնված է այն նկատողութեան

վրա, որ քաղաքական յանցաւորները աւելի լաւ կրթված մարդիկ են և հետևաբար նրանց հետ չէ կարելի վարվել այնպէս, ինչպէս պարզ ոճրագործների հետ։ Այն բօպէից, երբ քաղաքական յանցաւորներին ուղարկում են բերդաբանդելութեան, նրանց ազատ են թողնում և թոյլ են տալիս աշխատել և իրանց ապրուստը շահել։ Իսկ եթէ նրանց համար դժուար կամ անկարելի է լինում իրանց ապրուստը շահել, կառավարութիւնը պարտաւոր է նրանց օրական 4 ղրուշ (40 կօպէկ) պէնսիա տալ և դատապարտեալի ընտանիքին վճարել թոշակ, եթէ այս վերջինը չքաւորութեան մէջ է գտնվում։

Բայց, ինչպէս յայտնի է, թրքական օրէնքները թղթի վրա միայն գոյութիւն ունեն։ Նրանք երբէք չեն գործադրվում։

Հայ բանտարկեալները ոչ միայն օրական պէնսիայի յոյսից միանգամայն հրաժարված են, այլ նրանք բաղդաւոր կը լինէին, եթէ գոնէ նրանց չը բանտարկէին հասարակ ոճրագործների հետ և թոյլ տային աքսորավայրում ազատ ման գալ։ Բայց այդպէս են վարվում միմիայն թուրք քաղաքական յանցաւորների հետ։

Հայ դատապարտվածները այդ արտօնութիւնից զրկված են։ Նրանց բողոքները չեն լսվում և յաճախ աւելի վատ հետևանքների ծնունդ են տալիս։ Եթէ նրանք դիմեն պատրիարքին կամ հիւպատոսի, նրանց այդ քայլը նրանց համար շատ թանգ կը նստի։ Այդպիսի յանդգնութեան դէպքում, նրանց բռնում շղթայում են օրերով և ամիսներով, մինչդեռ նոյն բանտի մահմեդական մարդասպանները ազատ են և իրանց ոտքին շղթայ անգամ չունեն, թէպէտև օրէնքը պահանջում է, որ նրանք միշտ շղթայակապ լինեն։

Այդ անարդար անհաւասարութիւնից առաջանում են թշնամութիւններ, որոնք կռիւներով են վերջանում։

Այս դէպքում նորից հայերն են, որ տուժում են։ Նրանք գանակոծվում են և կրկին դատապարտութեան ենթարկվում՝ մի նոր դատարանի կողմից։ Մեծ զոհողութիւններով՝ հայերը երբեմն դիմում են Կ. Պոլսի պատրիարքին, իրանց դրութիւնը մի փոքր բարելաւելու յոյսով։ Տարիներ են անցնում և ոչինչ չէ փոխվում. վերանորոգում են իրանց դիմումը և նորից են պատժվում։

Պատրիարքարանի միջամտութիւնը մի ելքի յանգում է միայն երկրորդական հարցերի վերաբերմամբ։ Կառավարութիւնը աշխատում է բաւարարութիւն տալ մանր խնդիրներին, որպէս զի մեծերից խուսափի։ Բայց դժբաղդաբար պատրիարքը երկչոտ է և չէ սիրում շատ դիմումներ անել։

(Pro Armenia)

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդօնից հեռագրում են «P. Cл.» լրագրին. «Յայտնի արխիմիլիօնատէր Կարնէգին այսօր ընդունեց իր ամարանոցում Մոսկվայի սլաւօնական ընկերութեան պատգամաւորութիւնը, Զերէպ-Սպիրիդօվիչի առաջնորդութեամբ։ Պատգամաւորութիւնը նկարագրեց քրիստոնեաների տանջանքների պատկերը Մակեդոնիայում և Հայաստանում և խնդրեց բարոյական ազդեցութիւն գործել տարբերներին վերջ տալու համար։ Կարնէգին խոստացաւ զբաղվել այդ հարցով և ասեց, որ թիւրքերի գտնվելը Եւրոպայում ամօթանք է ժամանակակից քաղաքակրթութեան համար։»

—Թէհրանի մամուլը ժամանցոյց է անում, որ անգլիական սահման որոշող կոմիսիան անարդար կերպով տուել է Աւղանիստանին պարսկական Սէիստանի մի մասը, որից Էմիրը մի առանձին նահանգ է կազմել Ֆերա գլխաւոր քաղաքով։ Նոյն-պէս կոմիսիան առել է Պարսկաստանից Գիլզէնդ գետի 2/3 մասը, որով զրկում է պարսկական Սէիստանը պտղաբերութիւնից։ Թերթերը պնդում են որ յիշեալ կոմիսիայի արձանագրութիւնը չը հաստատվի։ (Պետ. Գ.)

—Յուլիսի 8-ին Սուլթանի կեանքի դէմ արած փորձի առիթով բռնված հայերից մէկի ցուցմունքի համեմատ խուզարկութիւն եղաւ այն անգլիացու տանը, ուր յիշեալ հայը գտնապանի պաշտօն էր կատարում։ Գտնված են 15 դատարկ ռումբեր, 15 շիշ հեղուկ պայթուցիկ նիւթերով լցված և մեծ քանակութեամբ տրված հայերէն բրօշիւրներ։ Հայերի ձերբակալութիւնը շարունակվում է։ (Պետ. Գործակ.)

—«L'Arménie»-ն հաղորդում է, որ պ. Գէորգ Թուրեան՝ Հարվըրդի համալսարանում, կրօնների պատմութեան պրոֆէսօրի օգնական է կարգվել։ Պ. Թուրեան նոյն համալսարանի շրջանաւարտներից է։

—«Le Journal des Débats»-ն հաղորդում է, որ Պարսկաստանի հեռագրական վենտրութեան խորհրդական գեներալ Բազիրկեանի աղջիկը՝ օրիորդ Մարիամ Բազիրկեան, որ անցեալ տարի, մի և նոյն ժամանակներում, bachelier ès lettres (դպրութեանց պսակաւորի)-ի քննութիւնն էր անցկացրել Սորբոնի համալսարանում, ոչ պակաս աջողութեամբ այս տարի անցկացրեց փիլիսոփայութեան քննութիւնը։ Օրիորդ Բազիրկեանի աջողութիւնները նշանակալից են մանաւանդ նրա համար, որ նա՝ 150 մրցակիցների մէջ, միակն էր իր սեռի մէջ։ Աւելացնենք, որ օրիորդ Բազիրկեան՝ լաւ դաշնակահար և փայլուն ակվարելիստ է։»

—«Gaulais» թերթի մէջ կարդում ենք. «Մի շատ հեռաբերիր փորձ պէտք է կատարվի Պարիզում, աշակերտներին ազատելու համար մտաւոր ծանրաբեռնութիւնից, յոգնածութիւնից։ Կէս օրից յետոյ (այսինքն ցերեկվայ 12-ից յետոյ) ամեն դաս ջնջել. այս կերպով ստացված ազատ ժամանակը յատկացնել զբօսանքների, բացօդեայ խաղերի, ֆիզիքական մարզանքների, ձեռային ատաղձանական աշխատանքների, կաղապարումի (մոդելաժ), գծագրութեան և երաժշտութեան. երեխայի ձեռքը և աչքերը մարզել նոյնքան, որքան յիշողութիւնը։ Խնամք տանել նրա մարմնի, նրա ճարպկութեան, դիւրաշարժութեան մասին համարեա նոյն չափով, որքան նրա խմացականութեան և մտքի մասին։ Աշակերտին սովորեցնել բնական պատմութեան տարերքները ոչ թէ գրատախտակի կամ գրքերի միջոցով, այլ դաշտերում, խոտաքաղերով, էրբօրիզացիաներով. տալ նրան կօնկրետ և կենդանի ուսում, որ նրան ընդունակ դարձնէ իրերը տեսնելու, փոխանակ նրանում դասարկ աբստրակցիաներ զարթեցնելու։ Նկատի ունենալով ֆրանսիական բարքերը, թվում է թէ սա մի յանդուգն ծրագիր է։ Բայց նրանում պարադօքսալ ոչինչ չը կայ, որովհետև ինչպէս, ելևում է, դպրոցական տարեշրջանի սկզբին՝ Պարիզի մեծ կոլէժներից մէկը պէտք է փորձէ այդ ծրագրի գործադրութիւնը։»

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

### ՌՈՒՍԱՍ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

*9 սեպտեմբերի*

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր զինուորական գլխաւոր դատարանը փոխեց արդարացման դատավճիռը այն երկու կովկասցիների, որոնք մեղադրվում էին Բագուի նահանգապետ իշխան Նակաշիձէի սպանութիւնը պատրաստելու մէջ։

ԼԻՄԵՐՆ, 9 սեպտեմբերի։ Սկանդինավեան պետութիւնների ներկայացուցիչները հաստատում են, որ շվեդօ-նորվեգիական վէճը կը յանձնվի միջնորդ դատարանի քննութեան։ Նախագահի ընտրութիւնը կը յանձնվի շվեյցարական դաշնակցական խորհրդին։

ՊԱՐԻԶ, 9 սեպտեմբերի։ «Մատէն» լրագրի տեղեկութեամբ, Լէրէֆօֆ ծովային մինիստրը յայտնեց, որ Կիլում ծովը ձգած մակոյկը ճիշտ պատճէնն է ֆրանսիական «Էգրէ» լաւագոյն մակոյկի։

ԿԱՐԱԿԱՍ, 9 սեպտեմբերի։ Վենեցուէլլայի կառավարութիւնը հրաժարվում է գոհացումն տալը Ֆրանսիային կաբէլի փակման առիթով։ Ենթադրում են, որ Ֆրանսիան կը դիմէ ոյժի։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 8 սեպտեմբերի։ Ռուզվէլտ յայտնեց, որ օգոստոսի 31-ին ռուսաց դեսպանը տեղեկացնելով նրան Թագաւոր Կայսրի ցանկութեան մասին գումարել խաղաղութեան կօնֆերենցիա Հաագայում հարցրել է թէ արդեօք հաճաձայն է Ռուզվէլտը, որ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգները մասնակցութիւն ունենան այդ միջազգային ժողովին։ Նախագահը յայտնեց իր հաճաձայնութիւնը։ Պաշտօնական յիշատակագիր կուղարկէ Ռուսը այս օրերս։

ՏՕԿԻՕ, 9 սեպտեմբերի։ Ծովապետ Նէբոգատօվ, գեներալ Սմիրնօվ և ուրիշ բարձրաստիճան օֆիցէրները թոյլատրութիւն ստացան վերադառնալ Ռուսաստան ազնիւ խօսքով։

Ծովապետ Բօժէտովէնսկին համարեա կատարելապէս առողջացաւ։

Կօտակում կայացաւ ժողով խաղաղութեան դաշնագրի կապելը տօնելու համար։

ՊԱՐԻԶ, 9 սեպտեմբերի։ Բուվիէ ի պատիւ Վիտտէի նախաճաշ տուեց։

ԵԼԻՍԱՒԵՏՊՕԼ, 9 սեպտեմբերի։ Բանւոր հայերի մեծ հոսանքը Բագուից, շատ անպատատպաւորութիւն է գործում մահմեդականների տրամադրութեան վրա։

ՄԻՏԱՎԱ, 9 սեպտեմբերի։ Նկատված է, որ Կուրլիանդիայի նահանգում զինուորական դրութիւնը յայտարարելու պատճառով, ագիտատորները հեռանում են հարևան Լիֆլեանդիայի նահանգը, ուր արդէն շատ յարձակումներ են գործում, և մանաւանդ աւերում են գինետները։

ՐԻԳԱ, 9 սեպտեմբերի։ Երէկ երեկոյեան 8 ժամին, երեք չարագործներ վիրաւորեցին գրոզօվոյ Շալկիսին։ Չարագործները փախան։

ՎԱՐՇԱՎԱ, 9 սեպտեմբերի։ Ցերեկվայ մօտ 12 ժամին Սաքսոնեան այգու վրա նայող Պէրիշէվսկու պաշտպամը ռումբ գցվեց։ Փախչող չարագործը, ռումբի կտորով գլխից վիրաւորվելով, բռնվեց։ Նրա ով լինելը դեռ ևս չէ իմացված։

*10 սեպտեմբերի*

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Правит. Вѣстн.»-ում յայտարարված է ընդարձակ Բարձրագոյն հրաման՝ մի քանի զարգ աքսորականների վիճակի բարւոքման և թեթևացման մասին։ Վլօյցլավկում արձանագրված խօլերայի մահվան 3 դէպք։ Լօձում նկատված է խօլերայի 2 դէպք։

ՄՕՍԿՎԱ։ Սեպտեմբերի 12-ին Պետերբուրգում կայանանալու է նաւթարդիւնաբերողների ներկայացուցիչների ժողով։ Կը գործադրվեն բոլոր միջոցները նաւթի արտադրման համար։ Անհրաժեշտ է անմիջապէս հոգալ Վոլգայի նաւթային արդիւնաբերութեան մասին, հնարաւորութիւն տալով մատակարարելու շոգենաւերին նաւթ, մինչև նաւագնացութեան վերջը, այդ նպատակի համար ի նկատի ունեն պատրաստի եղած 4 միլ. պուդ նաւթը։ Ինչ վերաբերում է մնացած արդիւնաբերութեան, մինչև նոր նաւագնացութիւնը կը պակասի 50 միլ. պուդ նաւթ, որ եթէ փոխարինվի քարածուխով, կը կազմէ 90 միլ. պուդ։ Ռուսաստանի հարաւում կայ 55 միլ. պուդ քարածուխի պաշար։ Մինչև 1 միլիարդ պուդ քարածուխի արտադրելովը,—եթէ նոյն իսկ 90 միլ. պուդ ձեռք բերվի, 10%-ից պակաս կը լինի։ Այդպիսի քանակութիւն, պարզ է, որ կարելի հեշտութեամբ շուկա հանել, բայց պատահականութիւնից և գների բարձրանալուց խուսափելու համար, մինիստրը մտադիր է պակասացնելու երկաթուղային տարիֆը ոչ միայն ռուսաց հանքերից, այլ և բալտիական ծովի և ցամաքային սահմանների ուղղութեամբ որպէս զի դրանով հեշտացնէ արտասահմանից եկող քարածուխի ներմուծումը։ Բանւորական հարցի վերաբերմամբ, մինիստրը յիշեցրեց, որ բանւորական աշխատանքների դադարումը եղել է հէնց իրանց արդիւնաբերողների կամքի համաձայն. եթէ նրանք հնարաւոր են գտնում վերսկսել աշխատանքները, նա շատ ուրախ կը լինի։

ՕԴԷՍՍԱ։ Զինուորական դատարանը մեղաւոր ճանաչեց Կօֆմէնին—ոստիկանութեան ընդիմադրելու մէջ, և բանտարկութեան ենթարկեց։

ԼՕՆԴՕՆ, 9 սեպտեմբերի։ Լուր տարածվեց, որ Եապօնիան իբր թէ կամենում է Փարիզում մի նոր 500 միլ. ֆրանկի փոխառութիւն կնքել։

ՊԱՐԻԶ, 10 սեպտ։ Հաւատացնում են, որ ֆրանս-գերմանական բանակցութիւնների ուշանալու պատճառը կայանում է նրանում, որ Գերմանիան վերին աստիճանի մեծ պահանջներ է առաջարկում։

ՏՕԿԻՕ, 10 սեպտ։ Ամերիկական «Բարակա» նաւը, որ բռնել էին եապօնացիները—գընում էր Սան-Ֆրանցիսկոյից Նիկալայովսկ ուտելիքի պաշարով։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 9 սեպտ։ Կուբայկայ եկած հեռագիրը հաղորդում է, որ ոստիկանութեան և ազատամիտ կուսակցութեան անդամների մէջ արիւնահեղ ընդհարում է տեղի ունեցել։

ԿՕՆԳՕՆԴ։ Այստեղ եկան 345 չինական կուլիներ, որ աքսորված են Տրանսվալից, որպէս անհանգիստ սարը։

Կ. ՊՕԼԻՍ, 9 սեպտ։ Պաշտօնապէս հաղորդում են, որ Բօգդանցի մօտ Դէվգէլի շրջանում, թիւրքաց զօրքերը հանդիպեցին բուլգարական խմբին. ընդհարումը ամբողջ օր տեւեց. չը նայած բուլգարների գրաւած աջող դիրքերին, զօրքերը բոլորին ոչնչացրին խումբը, որի առաջնորդը սպանվեց։ Հայոց կրօնական ժողովը որոշեց չը ճանաչել եկեղեցու համայնքի անդամ ամեն մի հայի, որը ամենաթեթև կերպով նոյն իսկ կը խախտի իր հաւատարմութիւնը դէպի թիւրքական պետութիւնը։ Հայոց պատրիարք Օրմանեանը յայտնեց այդ վճիռը թիւրքաց ներքին գործերի և արդարադատութեան մինիստրներին։

ՊԱՐԻԶ, 10 սեպտ։ Բերլինի թղթակիցը հաղորդում է, որ Վիտտէի տեսակցութիւնը Վիլհէլմ կայսրի հետ, առաջ է եկել ֆրանս-գերմանական ընդհարումից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


### Վրաստանի եւ Իմերէթի

հայոց թեմի սրբազան առաջնորդը սրանով յայտնում է այն ուսուցիչներին և ուսուցչուհիներին, որոնք դիմել և խնդրել են պաշտօն բացվելիք ծխական դպրոցներում, որ երկու օրվայ ընթացքում ուղարկեն առաջնորդարան գրաւոր տեղեկութիւններ. 1) Ո՞րտեղ և ի՞նչ են աւարտել. 2) ո՞ր դպրոցում են ծառայել. 3) ի՞նչ առարկայ են ուզում աւանդել. 4) աւարտման վկայականի համարը և 5) մանրամասն հասցէն։ 1—1

### ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

## ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

*Հիմված 1880 թ.*

*(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)*

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

ԶԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային

Զ. Ի. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.

Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. .Գ ԱԲԵԱՆՑ—7—8 ժ. ներքին հիւանդ.

Գ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆԻ. կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ։

Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—ատամ. ծաղկահատ և բժշկատան մարդամարդ. դիմել 11—1 ժ..

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ

բժշկապետ Բ. Նաւասարդեան

---

ԲԺՇԿԱՊԵՏ

## Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ

Մասնագէտ միզային և սիֆիլիտիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ, երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 20.

(ե. հ. շ. կ.) 15—30

---

ԲԺԻՇԿ

## Լեւոն Քամոյեան

Վերադարձաւ Կովկասեան Հանքային ջրերից և վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։ Միզանցասեռական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ։ Առաւօտեան 9—12 ժամ, երեկոյեան 3—8 ժամ։ Միքայէլեան փողոց, № 55։ (ա. օ. յ. օր.մ.) 3—30

---

## ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին ordinateur Մոսկվայի համալսարանի կլինիկայի

Վերսկսեց ընդունելութիւնը յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան։ Բոլշէսկի փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տելէֆօն № 11.

(ա. օ.) 7—10

---

ԲԺԻՇԿ

## Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպէկտի և Կաղետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղետսկի փողոցից № 2. (ա. օ.) 19—300

---

## Բժիշկ Բ. Ա. Պապօվեան

Վերադարձաւ արտասահմանից և վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։ Մասնագէտ քթի, կոկորդի և ականջի։ Ցերեկվայ 1 ից մինչև 2 ժամը, երեկոյեան 5—7 ժամը։ Հասցէն Միքայէլեան փողոց, տուն Ֆօքէրի, № 157. (ա.օ. յ. օ.մ.) 10—10

---

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

## Ս. Գ. Շերամազանեանց

Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, Երևանեան հրապարակ, տուն Արղութեան, բնակարան Լալայեանցի բնակարան։

---

ԲԺՇԿԱՊԵՏ

## Տ. ԳԻՈՐԳ-ԲԻԳԵԱՆ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փողոց №8։ (ե.ո.) 3—100

---

## Նկարիչ Բ. Ճէպէյեանի

Հայկական եկեղեցական ՊԱՏԿԵՐՆԵՐԻ, ԽԱՉՎԱՌՆԵՐԻ, ԽԱՉԿԱԼՆԵՐԻ և ոսկեզօծելու արհեստանոց

Ընդունվում են ՄԻՄԻԱՅՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ. Զուսնոր եկեղեցիներին տրվում է ապառիկ նպաստաւոր պայմաններով. պատուէրները կատարվում են ընտիր

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱԿՈՎ

Тифлисъ, Гановская № 7. Б. Джебяну.

Ցուցակը և պայմանները ուղարկվում է ձրի։

(հ. կ.) 5—5

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

I

## ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

ռուսերէնից հայերէն

Լոյս տեսաւ **ՈՒԹԵՐՈՐԴ** պրակը,

Գինը 1 ր. 20 կոպ.

Ամբողջ բառարանի բաժանորդագրէնն է 7 ր., ճանապարհածախսով 8 բուբլի, փառակազմ 9 ր.։ Հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում։ Դիմել հեղինակին հետևեալ պարզ հասցէով. Тифлисъ, А. С. Дагбашяну. Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել «Գուտենբէրգ» գրախանութում։

II

## ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ

հայերէնից ռուսերէն

Լոյս տեսաւ ԱՌԱՋԻՆ պրակը, Գինը 1 ր., Ամբողջ բառարանի բաժանորդների համար 5 ր., առաջին բառարանիս բաժանորդների համար 4 ր. Դրպանի բառարան ռուսերէնից հայերէն։

Բաժանորդագրէնը 2 ր. 50 կ.։

Դիմել հեղինակին վերոյիշեալ հասցէով։

(կ) 1—1

---

Լոյս տեսան

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՑԵԱՆԻ

1) Մի եւ նոյն դագաղում, պատկեր. գինը 4 կոպէկ։ 2) Թարգմ.—«Կինը եւ նրա տնտեսական դրութիւնը», Կլար Ցետկինի. հրատարակութիւն Ն. Մատինեանի։ Դիմել հրատակչին՝ Թիֆլիս, Հերմէս տպարան, հեղինակին և գրավաճառներին։ Գումարով գիւղերին մեծ զեղչ։

1—4

---

## Մանկական պարտէզ, Դպրոց եւ պանսիօն

Ե. ՑԱՐՈՒԹԻՆԵԱՆԻ

Бебутовская, № 30.

Ընդունվում են երկու սեռի մանուկներ և պատրաստվում միջնակարգ դպրոցներ մտնելու համար։

(11,13,14,15,16,18,20,23,25) 1—10

---

Ամսիս 9-ին, Գուշկինեան փողոցով անցնելիս

## Կորցրել եմ

Ծալովի դրամագրպակ, որի մէջ կային—3 հատ մուրհակ, իւրաքանչիւրը 500 բուբլանոց, 2 հատ ժամանակաւոր պայերի կվիտանցիաներ №№ 1908, 1909, տրված Թիֆլիսի նաւթարդիւնաբերական ընկերութիւնից, և այլ ուրիշ կվիտանցիաներ։ Գտնողին խնդրում եմ հասցնել ինձ անձամբ կամ պօստով, որի համար խոստանում եմ վարձատրել։

Հասցէս—Թիֆլիս, Աւչալեան փողոց, տուն № 51. Զուրաբ Ալէքսանդրովիչ։ 1—1

---

**Թիֆլիսում** մի հայ օրիորդ, գիմնազիայի աշակերտուհի՝ ցանկանում է ձրի դասատուութիւն բոլոր առարկաներից, մինչև 6 դպ դասատուն, այն պայմանով, որ ճաշ և սենեակ ունենայ։ Դիմել՝ Тифлисъ Угокъ Багратіоновской „Ѳоминой" ул. д. Абуладзе кв, Н. Т., երեկոյեան 4—6 ժամը։ 1—2

---

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՂՐԱՎԱՆ հրաւիրում է բոլոր այն անձերին, որոնք կը ցանկանան իրանց վրա առնել ուղղափային և նրա ենթակայ բոլոր հաստատութիւններին վառելափայտ մատակարարել, բարեհաճել գալ ուղրավայի բնակարանը մասնակցելու աճուրդին, որը կը լինի սեպտեմբերի 13-ին, ցերեկվայ ժամը 12-ին։ (ա. օ.) 2—3

---

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

## Սոֆիա Ի. Գէլբօրտտ-Լօշկ

Տեղափոխվել է Կաղնաչէյսկի փողոց № 7, տուն իշխ. Թումանովայի, Ալէքսանդրեան այգու դիմացը։ (կ.ե.հ.) 42—100

---

## Ս. Վ. Արղուրեան-Երկայնաբազուկի

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆԸ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶԸ

Տեղափոխվում է Սօլօլակ

Պակեվիչի փող, № 9, տուն Տէր-Ասատուրեանի, նախկին III իգական գիմնազիայի կից։

Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 27-ից։

Պարապմունքներն սկսվում են սեպտեմբերի 7-ից։ (կ. ե. հ.) 3—3

---

**Դասագրքեր,** օժանդակ ձեռնարկներ և տնային ընթերցանութեան գրքեր, մինչնակարգ և ստորին ուսումնարանների աշակերտների համար, նոյնպէս և ժողովրդական ընթերցանութեան համար էժանագին գրքեր մեծ քանակութեամբ պատրաստված են Թիֆլիսի կենտրոնական գրավաճառանոցում։

Օտար քաղաքներից պէտք է դիմեն՝ Въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ

(ա. օ.) 7—10

---

**Մի** խնամելիգենտ ընտանիքում ընդունում են

ԳԻՇԵՐՕԹԻԿ

աշակերտներ լիակատար պանսիօնով, դասերի կրկնութեամբ (բեպետիրովկա)։ Դիմել Авлабаръ, Лазаревская ул. д. Мурадова, № 49. Ցարութիւն Եսայեանին։ (շ. կ. չ.) 3—4

---

**Հարկաւոր է** Շուլավէրի երկսեռ դպրոցների համար երկու ուսուցիչ և երկու ուսուցչուհի. ուսուցիչներից մէկը հայոց լեզուի և եկեղեցական երգեցողութեան (բառաձայն խմբեր պատրաստելու համար), իսկ միւսը ռուսաց լեզուի և թուաբանութեան։ Կահ-կարասիներ պատրաստելու պատճառով ուսումը սկսվելու է սեպտեմբերի 20-ից և վերջանալու է յունիսի 20-ին։ Ցանկացող ուսուցիչները և ուսուցչուհիները յայտնեն որտեղ են աւարտել կամ քանի տարի են պարապել ուսուցչութեամբ և որտեղ։

6—6 (ա. օ.) Տանուտէր Վ. Մեհրաբեան

---

Ցարութիւն Թումանեան

Համառօտ

## ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հայոց աշխարհաբար լեզուի

Ստորին եւ միջնակարգ դպրոցների համար

Գինն է 40 կոպէկ։

Դիմել՝ Тифлисъ. Чавчавадзевская ул. домъ Маркарова № 25-а, Арутюну Туманьяну.

(հ. շ. կ. ե.) 3—5

---

## Բժիշկ Գր. Մակարեան

Վերադառնալով նորոգեց հիւանդների ընդունելութիւնը ներքին և երեխայոց հիւանդներին, ամեն օր ժամը 4-ից մինչև 6 երեկոյեան. Միքայէլեան փողոց, Բերիեվի տուն № 134, տելեֆոն № 907.

(կ. ե. չ.) 7—10

---

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնն ընդունում է նուէրներ յօգուտ Շուշու և Բագուի վերջին աղէտից զոհվածների, թէ փողով և թէ հագուստով. Գանձակայա փողոց, № 19, կար ու ձևի արհեստանոց։ 2—3

---

Նորուսներեի համար կազմած

«Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ»

գործածողներից խնդրում եմ՝ իրանց նկատողութիւններն ուղարկել ինձ — Армавиръ (Куб. об.) регенту С. Шааняну, որպէս զի երրորդ տպագրութեան ժամանակ թերութիւններն ուղղեմ։ 2—4

---

Լոյս տեսաւ և վաճառվում է

Կ. ԿԱՈՒՑԿՈՒ

## «ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԶԳԱՑՆՈՒԹԻՒՆ»

Թարգ. Դար. Պապվեանի

Գինն է 15 կոպ.

Թիֆլիսում կարելի է ստանալ բոլոր հայ գրավաճառների մոտ. օտար քաղաքներից դիմել՝ Тифлисъ Типографія «Гермесъ» Осепяну.

4—5

---

Լոյս տեսաւ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆՑԻ

## ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ և ՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ

տարրական դասընթաց

Առաջին մաս

Ստորին դասարանների համար.

Գինն է 20 կոպ.

Դիմել Թիֆլիսի գրավաճառանոցները։ Գտհեստը հեղինակի մոտ. հասցէն Ցուիմիադզինչ, Гарегинъ Левонянцъ. Въ Академіи. 8—10

---

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

## ԿՐՕՆԻ

ՀԵՏԵՒԵԱԼ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

(Թոյլատրած հոգևոր իշխանութիւնից)

I ուսուցչաց համար.

1. Ուղեցոյց Հին-ուխտի . . . 15—7
2. Ուղեցոյց Նոր-ուխտի . . . 2— 5
3. Ուսուցումն քրիստ. կրօնի Դ. հատոր 1— 50
4. Ուսուցումն քրիստ. կրօնի Ե. հատոր — 50
5. Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին — 10

II աշակերտաց համար

6. Դասատետր կրօնի Ա. տարի (11 տիպ)— 20
7. Դասատետր կրօնի Բ. տարի (10 տիպ)— 25
8. Դասատետր կրօնի Գ. տարի (8 տիպ)— 30
9, Սրբազան պատմ. Հին ուխտի (6 տիպ)— 35
10. Սրբազան պատ. Նոր. ուխտի (5 տիպ)— 40
11. Գործք առաքելոց . . . — 40

Կարելի է դիմել.

1. Ինձ—Тифлисъ, Коммерческое училище.
2. » Книжн. магаз. Гуттенбергъ.
3. » Центральная книжн. торг.

Ինձ դիմողներն ստանում են. 1) Ուսուցչաց դասագրքերի համար 35%, 2) իսկ աշակերտաց՝ 20% զեղչ (Ա. տարին 25%) Աղքատ դպրոցներին ձրի։ Սահակ քհ. Սահակեանց

(չ. ո. կ.) 17—15

---

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

## ԱՌԵՒՏՐԱԳԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

(Баку, Пречетная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական, եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համբիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագիր ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։

Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А.И. Теръ-Каспарову.

(չ. կ.) 20—36

---

Բօրժոմի նոր բացվելիք հայոց ծխական դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցիչ, մի ուսուցչուհի և մէկ տիրացու։ Պայմանների մասին դիմել պ. Ղևոնդ Յակոբեանին Вельяминовская № 34. 4—4

---

Առանձին գումարով գնողներին 1 բուբլուն 20% զեղչ։ Ճանապարհածախսով գումարով պահանջողները պէտք է ուղարկեն փողի 1/3 մասը. հասցէն՝ Тифлисъ, улица Броссе № 5. Книгоиздателю А. А. Ованесянцъ.

Տէլէֆոն № 1033. 2—2

---

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

(Тифлисъ, Сололакъ, Лермонтовская ул. № 9)

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն. 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաբանութիւն համբիչի վրա. 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Գրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա։ Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմոնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (կ. ե. հ.) 16—25

---

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի հասարակութեանը, որ ես, Բագուի նախկին գործարանատէր

## Մ. Ի. ՄԻՐԶԱԲԷԿԵԱՆՍ

տեղափոխված լինելով Թիֆլիս, ԲԱՑ ԵՄ ԱՐԵԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ և ՄԱԳԱԶԻՆ

## ԿՕՇԻԿՆԵՐԻ

Սօլօլակի և Ֆրէյլինսկի փողոցների անկիւններում, իշխ. Բատիեվի տանը (նախկին իշխ. Է. Գրուզինսկու)։ Ընդունում են ամեն տեսակ կօշիկների պատուէրներ իմ անձնական հսկողութեան տակ։ Արտակարգ պատուէրները կատարվում են արագ, ճիշտ և լաւ։ Ապրանքի և աշխատանքի լաւութեան համար ֆիրման պատասխանատու է։

(ո. կ. չ.) 2—5

---

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

## ՀԱՐՈՒՍՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ Ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՕՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։

Պարապմունքի առարկաներն են.

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնաբերութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Առևտրական թղթակցութիւն։ 3) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղումն ամենավատ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համբիչի վրա։ 7) Գրելու վարժութիւն «Ռէմինկտոնի» գրելու մեքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով իրանց գործի մասնագէտ մարդիկ, որոնք հաստատել են իրանց պաշտօնում Ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1905 (սեպտեմբերի 15-ից պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ 60 բուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացը աւարտողներին տրվում են, Ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н. В. Абрамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու. ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ (հ. կ. ե.) 17—25

Дозволено цензурою. Тифлисъ, -10го сентября 1905 г Տպարան «ՀԵՐՄԷՍ» բնկ. Электропечатная типографскаго Т—ва «Гермесъ». Мад. ул. № 15.